ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Ապատեղեկատվության դեմ պայքարում պետական կառույցների, ՔՀԿ-ների, մեդիայի և մասնավոր հատվածի միջև

Սույն փաստաթուղթը պատրաստվել է «Հայաստանի ապատեղեկատվության դիմադրողականության ակադեմիա. ռազմավարական պաշտպանության կարողությունների զարգացում Լիտվայի փորձի փոխանցման միջոցով» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից: Ծրագիրը ֆինանսավորվում է ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության դեսպանության կողմից՝ Լիտվայի զարգացման համագործակցության և ժողովրդավարության աջակցման ծրագրի շրջանակներում:

Բովանդակության համար պատասխանատու է Իրավաբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Լիտվայի Հանրապետության դեսպանության կամ կառավարության տեսակետները:

Փաստաթուղթը պատրաստել են «Հայաստանի ապատեղեկատվության դիմադրողականության ակադեմիա. ռազմավարական պաշտպանության կարողությունների զարգացում Լիտվայի փորձի փոխանցման միջոցով» ծրագրի փորձագետներ Մարիամ Զաղոյանը և Սյուզաննա Սողոմոնյանը:

Փաստաթղթից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ, 2025

ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 7. գրասենյակ 2

Հեռախոս՝ +37410 540199

Էլ. փոստ՝ info@armla.am

Վեբ կայք՝ https://armla.am/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 4
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5
2. ՏԵՍԼԱԿԱՆ 6
3. ՆՊԱՏԱԿՆԵՐ 7
4. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ 7
5. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 8
5.1. Ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորում 10
5.1.1. Ազգային համակարգող մարմնի ստեղծում 10
5.1.2. Միջգերատեսչական հաղորդակցական ռազմավարության և հաղորդակարգերի ձևավորում 12
5.1.3. Կանխարգելիչ կառավարում և մոնիթորինգ 15
5.1.4. Թվային կարողությունների զարգացում և տեխնիկական ապահովում 16
5.1.5. Մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացում 18
5.2. Համագործակցություն 21
5.2.1 ՔՀԿ-ների հետ համագործակցություն 21
5.2.2 Մասնավոր հատվածի/ՏՏ հատվածի հետ համագործակցություն 22
5.2.3 ԶԼՄ-ների հետ համագործակցություն 23
5.2.4 Փաստերի ստուգման հարթակների հետ համագործակցություն 24
5.2.5 Սփյուռքի հետ համագործակցություն 25
5.2.6 Միջազգային համագործակցություն 26
5.3 Մեդիագրագիտություն և կրթություն 28
5.3.1 Մեդիագրագիտության իրավական հիմքերի ամրապնդում 28
5.3.2 Նախադպրոցական կրթությունում մեդիագրագիտության ներդրում 29
5.3.3 Հանրակրթական համակարգում մեդիագրագիտության զարգացում 30
5.3.4 Բուհական կրթությունում մեդիագրագիտության ներդրում 31
5.3.5 Համայնքային և ոչ ֆորմալ կրթության հնարավորությունների ստեղծում 32
5.3.6 Երեխաների և անչափահասների պաշտպանություն թվային միջավայրում 34
6. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ 36

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԳՆ	**Արտաքին գործերի նախարարություն**
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԲՏԱՆ	Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ԳԾ	Գործողությունների ծրագիր (Ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026թթ. գործողությունների ծրագիր)
ԵՄ	Եվրոպական Միություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոցներ
ԻՀԱ	«Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ
ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿԶՆԱԿ	«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ
ԿՏԱԿ	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՀԿՏԿ	«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ
ՀՌՀ	Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
Հայեցակարգ	Ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային հայեցակարգ (2024-2026թթ.)
Հաշվետվություն	ՀՀ վարչապետի աշխատակազմի 2024 թվականի հաշվետվություն
ՆԱՏՕ	Հյուսիսատլանտյան դաշինք
ՆՈՒՀ	Նախադպրոցական ուսումնական հաստատություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՌՀԱԾ	Ռազմավարական հաղորդակցության աջակցության ծրագիր (ԱՄՆ ՄԶԳ)
ՏԱ	Տեղեկատվության ազատություն
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ապատեղեկատվությունը Հայաստանի համար դիտարկվում է ոչ միայն տեղեկատվական, այլև ազգային անվտանգության լուրջ մարտահրավեր։ Այն ազդում է հանրային վստահության, ժողովրդավարական կառավարման և պետական քաղաքականության արդյունավետության վրա։ Այդ իսկ պատճառով պահանջվում է համակարգված մոտեցում, որը միավորում է պետական մարմինների, քաղաքացիական հասարության կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ), մեդիայի, մասնավոր և ակադեմիական հատվածների ջանքերը՝ ձևավորելով կանխարգելման, արձագանքման և հանրային դիմադրողականության ամբողջական համակարգ։

Հայաստանում ապատեղեկատվության դեմ պայքարի ներկայիս քաղաքականությունը բնորոշվում է արձագանքման գերակշռությամբ՝ կանխարգելման փոխարեն։ Ինստիտուցիոնալ մակարդակում բացակայում է մշտական համակարգող մարմին՝ միասնական իրավական կարգավիճակով, չի ընդունվել Կառավարության ընդհանուր հաղորդակցական ռազմավարությունը, և չեն մշակվել արագ արձագանքման հաստատված հաղորդակարգերը։ Համագործակցության մակարդակում բացակայում են կայուն ֆինանսավորման մեխանիզմները ՔՀԿ-ների և փաստերի ստուգման հարթակների համար, սահմանափակ է մասնավոր հատվածի և միջազգային դերակատարների ներգրավվածությունը, իսկ սփյուռքի հետ տեղեկատվական համագործակցությունը դեռևս զարգացման փուլում է։ Մեդիագրագիտության և կրթության մակարդակում՝ չի ընդունվել ազգային հայեցակարգ, հանրային մեդիագրագիտության մակարդակը շարունակում է մնալ ցածր, հանրակրթական համակարգում չափորոշիչը կիրառվում է մասնակի՝ բավարար ուսումնական նյութերի և վերապատրաստված ուսուցիչների բացակայության պայմաններում, իսկ երեխաների թվային անվտանգության համակարգը դեռևս ձևավորման փուլում է։

Միջազգային փորձի ուսումնասիրությունը, մասնավորապես՝ Լիտվայի հաջողված մոդելը, ցույց է տալիս, որ ապատեղեկատվության դեմ պայքարի կայուն և արդյունավետ համակարգը հիմնված է ինստիտուցիոնալ համակարգման, հասարակության լայն ներգրավման, մեդիագրագիտության համընդհանուր ծրագրերի և արագ արձագանքման մեխանիզմների վրա։ Այդ մոտեցման տեղայնացումն ու ներդրումը Հայաստանի պայմաններում կարող են էապես բարձրացնել հանրային դիմադրողականությունը տեղեկատվական սպառնալիքների նկատմամբ։

Սույն փաստաթուղթը՝ «Միջոլորտային համագործակցության ճանապարհային քարտեզը ապատեղեկատվության դեմ պայքարում», մշակվել է ապատեղեկատվության դեմ պայքարի շրջանակներում կառավարության, քաղաքացիական հասարակության, մեդիայի և մասնավոր հատվածի միջև համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով։ Այն ստեղծվել է որպես **փոխլրացնող գործիք** Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության «Ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026թթ. հայեցակարգի» և համապատասխան գործողությունների ծրագրի իրականացման համար։

Սույն նպատակին հասնելու համար փաստաթուղթը մշակվել է՝ կիրառելով հետևյալ **մեթոդները**.

1. **Համապարփակ քննարկումների արդյունքների հիման վրա։** Ուսումնասիրվել են 2025 թվականի հոկտեմբերի 15-ին անցկացված ՔՀԿ–կառավարություն ձևաչափով «Ապատեղեկատվության հակազդմանը նվիրված առցանց աշխատաժողովի»[1] և 2025 թվականի հոկտեմբերի 16-ին կայացած նույն թեմայով հանրային–մասնավոր երկխոսության ձևաչափով անցկացված աշխատաժողովի[2] արդյունքները, որոնք իրականացվել են Իրավաբանների հայկական ասոցիացիայի (այսուհետ՝ ԻՀԱ) կողմից։ Քննարկումների ընթացքում պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, մեդիա և ակադեմիական համայնքների ներկայացուցիչները համատեղ

[1] Աշխատաժողովի վերաբերյալ տեղեկատվություն հասանելի է հետևյալ հղմամբ. https://armla.am/55579.html

[2] Աշխատաժողովի վերաբերյալ տեղեկատվություն հասանելի է հետևյալ հղմամբ. https://armla.am/55568.html

վերլուծել են իրավիճակը, գնահատել առկա քաղաքականության արդյունավետությունը և ներկայացրել համալրող առաջարկություններ:

2. **Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա**: Ուսումնասիրվել են Լիտվայի Հանրապետության փորձը ապատեղեկատվության դիմակայման ոլորտում, ԵՄ անդամ երկրների ռազմավարական հաղորդակցության մոդելները, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության համաշխարհային առաջատար փորձը:
3. **Հայաստանի ազգային համատեքստի ուսումնասիրության հիման վրա:** Վերլուծվել են տեղեկատվական անվտանգության առկա մարտահրավերներն ու սպառնալիքները, պետական, քաղաքացիական հասարակության, մեդիա և մասնավոր հատվածների իրավիճակը, ինչպես նաև ապատեղեկատվության տարածման ուղիներն ու ազդեցության դրսևորումները՝ թե՛ Հայաստանում, թե՛ սփյուռքում: Հայաստանի ազգային համատեքստի ուսումնասիրության ընթացքում հիմք են հանդիսացել նաև պետական քաղաքականության հիմնարար փաստաթղթերը, ներառյալ՝ «Ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային հայեցակարգը» (այսուհետ՝ Հայեցակարգ) և դրանից բխող 2024–2026թթ. գործողությունների ծրագիրը[3] (այսուհետ՝ ԳԾ), ինչպես նաև ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացված 2024 թվականի հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն):

Սույն փաստաթուղթը նպատակ ունի ամրապնդելու բոլոր շահագրգիռ կողմերի միջև համագործակցությունը՝ ստեղծելով մի էկոհամակարգ, որում պետական կառույցները, քաղաքացիական հասարակությունը, մեդիան և մասնավոր հատվածը կարող են համատեղ ջանքերով բարձրացնել հասարակության դիմադրողականությունը ապատեղեկատվության նկատմամբ և ապահովել տեղեկատվական անվտանգությունը:

Ճանապարհային քարտեզի **ավելացված արժեքն** այն է, որ այն՝

- Ներկայացնում է **«Ամբողջ հասարակության» (Whole-of-Society) մոտեցումը՝** որպես ապատեղեկատվության դեմ պայքարի առանցքային ռազմավարություն, որը միավորում է պետական, քաղաքացիական, մեդիա, մասնավոր և ակադեմիական հատվածների ջանքերը:
- Ապահովում է համագործակցության հստակ արժեքային հիմքեր՝ հիմնված վստահության, թափանցիկության, ներառականության և չեզոքության սկզբունքների վրա:
- Հաշվի է առնում բոլոր շահագրգիռ կողմերի կարիքները, կարողությունները և դերակատարությունները՝ ապահովելով համագործակցության հավասարակշռված և իրագործելի համակարգ:
- Համադրում է պետական մակարդակով իրականացված կամ ընթացիկ գործողությունները քաղաքացիական հասարակության վերհանած բացերի հետ՝ ձևավորելով համալիր պատկեր քաղաքականության արդյունավետության մասին:
- Առաջարկում է միջոլորտային համագործակցության գործնական մեխանիզմներ՝ հստակեցնելով դերակատարների պատասխանատվությունն ու փոխգործակցության ձևաչափերը, ինչպես նաև բացերի լրացման և ինստիտուցիոնալացման ուղիները:
- Նպատակ ունի ձևավորել կայուն տեղեկատվական միջավայր, որը պաշտպանում է ժողովրդավարական արժեքները, խոսքի ազատությունը և բազմակարծությունը՝ բարձրացնելով հանրային դիմադրողականությունը ապատեղեկատվության նկատմամբ:

2. ՏԵՍԼԱԿԱՆ

Ստեղծել ապատեղեկատվության դեմ պայքարի արդյունավետ համագործակցության էկոհամակարգ, որտեղ պետական կառույցները, քաղաքացիական հասարակությունը և մեդիան

[3] «Ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային հայեցակարգ և դրանից բխող 2024-2026թթ. գործողությունների ծրագիր», ընդունված՝ ՀՀ վարչապետի 2023 թվականի նոյեմբերի 9-ի N 1319-Ա որոշմամբ, հասանելի է հետևյալ հղմամբ . https://www.arlis.am/hy/acts/187979

համատեղ ջանքերով բարձրացնում են հասարակության դիմադրողականությունը, ապահովում տեղեկատվական անվտանգությունը և խթանում փաստահեն հանրային դիսկուրսը:

3. ՆՊԱՏԱԿՆԵՐ

Այս բաժինը սահմանում է ապատեղեկատվության դեմ պայքարի համագործակցության ռազմավարության հիմնական նպատակները: Ներկայացված նպատակները համապարփակ կերպով ընդգրկում են ինչպես ինստիտուցիոնալ համակարգերի ստեղծումը և միջոլորտային համագործակցության ամրապնդումը, այնպես էլ հասարակության տեղեկատվական դիմադրողականության զարգացումը: Նպատակները ձևակերպված են այնպես, որ ապահովեն ինչպես արագ արձագանքման մեխանիզմների կատարելագործումը, այնպես էլ երկարաժամկետ կանխարգելիչ միջոցառումների ներդրումը՝ դարձնելով ռազմավարությունը բազմակողմանի և արդյունավետ:

Ըստ այդմ, փաստաթուղթը սահմանում է հետևյալ հիմնական նպատակները.

- **Ապատեղեկատվության դեմ պայքարի համակարգի ստեղծում:** Ձևավորել կենտրոնացված համակարգող կառույց, որը կապահովի ապատեղեկատվության դեմ պայքարի գործողությունների արդյունավետ իրականացումը և միջոլորտային համագործակցությունը.
- **Համագործակցության ինստիտուցիոնալիզացում:** Ստեղծել կայուն և գործուն մեխանիզմներ, որոնք կապահովեն պետական-ՔՀԿ-մեդիա համագործակցության շարունակականությունը.
- **Տեղեկատվական դիմադրողականության ամրապնդում**: Զարգացնել հասարակության և պետական մարմինների կարողությունները՝ ապատեղեկատվությունը ճանաչելու և դիմակայելու համար.
- **Արագ արձագանքման մեխանիզմների կատարելագործում**: Բարելավել ապատեղեկատվության հայտնաբերման և հակազդման օպերատիվությունը.
- **Հասարակության իրազեկվածության բարձրացում**: Խթանել մեդիագրագիտության զարգացումը հասարակության բոլոր խմբերում.
- **Կանխարգելիչ մեխանիզմների ներդրում**: Զարգացնել պրոակտիվ մոտեցումներ՝ ուղղված ապատեղեկատվության կանխարգելմանը, ոչ միայն արձագանքմանը:

4. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Այս բաժինը ներկայացնում է ապատեղեկատվության դեմ պայքարի համագործակցության հիմքում ընկած հիմնարար սկզբունքները: Սկզբունքներն ուղղված են բոլոր շահագրգիռ կողմերի միջև արդյունավետ համագործակցության ապահովմանը՝ հիմնված փոխադարձ վստահության, թափանցիկության և ժողովրդավարական արժեքների վրա: Դրանք նպատակ ունեն ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ ապատեղեկատվության դեմ պայքարի գործողությունները կլինեն անկողմնակալ, ներառական և համակարգված՝ միաժամանակ պահպանելով խոսքի ազատության և բազմակարծության սկզբունքները:

Ըստ այդմ, փաստաթուղթն առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով.

- **Փոխադարձ վստահություն և հարգանք:** Բոլոր շահագրգիռ կողմերի միջև հավասար գործընկերային հարաբերություններ.
- **Թափանցիկություն**: Համագործակցության գործընթացների և որոշումների կայացման բաց և հաշվետու բնույթ.
- **Ներառականություն**: Բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցության հնարավորության ապահովում.

- **Չեզոքություն**: Ապատեղեկատվության դեմ պայքարը չպետք է դառնա գաղափարական կամ քաղաքական պայքարի գործիք.
- **Արժեքային կողմնորոշում**: Գործողությունները պետք է միտված լինեն ժողովրդավարական արժեքների, խոսքի ազատության և բազմակարծության պաշտպանությանը.
- **Համակարգային մոտեցում**: Կանխարգելիչ և արձագանքող մեխանիզմների համադրում՝ ապահովելով բազմաշերտ պաշտպանություն:

5. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապատեղեկատվության դեմ պայքարի համապարփակ ռազմավարությունը հիմնված է երեք փոխկապակցված ուղղությունների վրա, որոնք միասին ապահովում են ինչպես արագ արձագանքման մեխանիզմների կատարելագործումը, այնպես էլ երկարաժամկետ կանխարգելիչ միջոցառումների ներդրումը: Յուրաքանչյուր ուղղության ներքո ներկայացվում են պետական մակարդակով իրականացված կամ ընթացքի մեջ գտնվող գործողությունները, դրանց փուլային առաջընթացը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կողմից վերհանված բացերը և դրանց լրացման հնարավոր ուղիները:

Ըստ այդմ, փաստաթուղթը սահմանում է հետևյալ առաջնահերթ ուղղությունները՝

- **Ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորում:** Ապատեղեկատվության դեմ պայքարի արդյունավետ համակարգի ձևավորման նախապայմանը նրա ինստիտուցիոնալ հիմքերի հստակեցումն է: Այս ուղղությունը ներառում է ազգային համակարգող մարմնի ստեղծում՝ որպես միջգերատեսչական մշտական կառույց, միջգերատեսչական հաղորդակցական ռազմավարության և հաղորդակարգերի ձևավորում՝ ապահովելով համահունչ հաղորդագրություններ և արագ արձագանք, կանխարգելիչ մոնիթորինգի համակարգերի ներդրում՝ շուրջօրյա տեղեկատվական վերահսկողությամբ, թվային կարողությունների զարգացում՝ ավտոմատացված վերլուծական գործիքներով և համապետական իրազեկման հարթակի ստեղծմամբ, ինչպես նաև պետական անձնակազմի համակարգված վերապատրաստում՝ եռամակարդակ համակարգով և մասնագիտական սերտիֆիկացմամբ:
- **Համագործակցություն:** Ապատեղեկատվության դեմ պայքարը պահանջում է բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավվածություն և համակարգված գործողություններ: Այս ուղղությունը ներառում է ՔՀԿ-ների հետ համագործակցություն՝ դրամաշնորհային ծրագրերի և կամավորական նախաձեռնությունների աջակցությամբ, մասնավոր և ՏՏ հատվածի ներգրավում՝ ինովացիոն ֆոնդի ստեղծմամբ և սոցիալական հարթակների հետ երկխոսության մեխանիզմների հաստատմամբ, զանգվածային լրատվամիջոցների (այսուհետ՝ ԶԼՄ) հետ փոխգործակցություն՝ մեդիա ինքնակարգավորման զարգացմամբ և արտոնությունների համակարգի ներդրմամբ, փաստերի ստուգման հարթակների հետ համագործակցություն՝ ազգային կոալիցիայի ստեղծմամբ և կայուն ֆինանսավորմամբ, սփյուռքի ներգրավում՝ համակարգման կենտրոնի հիմնմամբ և դեսպանների ծրագրերի իրականացմամբ, ինչպես նաև միջազգային համագործակցություն՝ տարածաշրջանային առաջատարության ձևավորմամբ և փորձի փոխանակմամբ:
- **Մեդիագրագիտություն և կրթություն:** Մեդիագրագիտությունը ապատեղեկատվության դեմ պայքարի հիմնաքարն է: Այս ուղղությունը ներառում է մեդիագրագիտության իրավական հիմքերի ամրապնդում՝ ազգային հայեցակարգի և գործողությունների պլանի ընդունմամբ, նախադպրոցական կրթությունում մեդիագրագիտության ներդրում՝ ինտեգրման ուղեցույցների մշակմամբ և մանկավարձների վերապատրաստմամբ, հանրակրթական համակարգում մեդիագրագիտության զարգացում՝ չափորոշչի իրականացմամբ, ուսումնական նյութերի մշակմամբ և ուսուցիչների վերապատրաստմամբ, բուհական կրթությունում մեդիագրագիտության ներդրում՝

կամընտրական առարկայի ազգային ծրագրի ընդունմամբ, համայնքային և ոչ ֆորմալ կրթության հնարավորությունների ստեղծում՝ գրադարաններում մեդիակենտրոնների հիմնմամբ և մեծահասակների համար առցանց հարթակի ստեղծմամբ, ինչպես նաև երեխաների և անչափահասների պաշտպանություն թվային միջավայրում՝ ազգային ռազմավարության մշակմամբ և անվտանգության մեխանիզմների ներդրմամբ։

Նշված երեք ուղղությունները փոխլրացնում են միմյանց և ձևավորում են ապատեղեկատվության դեմ պայքարի համապարփակ համակարգ։ Դրանց հաջող իրականացումը հնարավոր է միայն պետական կառույցների, քաղաքացիական հասարակության, մեդիայի, մասնավոր հատվածի և միջազգային գործընկերների համատեղ ջանքերով՝ հիմնված «Ամբողջ հասարակության» (Whole-of-Society) մոտեցման վրա։

5.1. Ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորում

Ապատեղեկատվության դեմ արդյունավետ պայքարի համակարգի հիմքում ընկած է ամուր ինստիտուցիոնալ շրջանակ: Պետական մակարդակով Հայեցակարգով և դրա ԳԾ-ով ընդգծվել է միջգերատեսչական համակարգման անհրաժեշտությունը՝ որպես առանցքային մեխանիզմ, որը պետք է միավորի պետական գերատեսչությունները, քաղաքացիական հասարակությունը և մասնավոր հատվածը ընդհանուր նպատակի շուրջ: Այս ուղղությամբ նախատեսված են համակարգող մարմնի հիմնումը, միասնական հաղորդակցական ռազմավարության ընդունումը, կանխարգելիչ մոնիթորինգի համակարգերի ստեղծումը, թվային ենթակառուցվածքների մոդեռնիզացումը և մարդկային կարողությունների համակարգված զարգացումը:

Գործնականում 2024թ. ընթացքում կատարվել են առանձին քայլեր՝ ձևավորվել է աշխատանքային խումբ, մեկնարկել են քարտեզագրման աշխատանքները, իրականացվել են վերապատրաստումներ: Այնուամենայնիվ, Հայեցակարգով սահմանված տեսլականի և գործնական իրականացման միջև դեռևս զգալի է բացը: ԳԾ-ով նախատեսված համակարգման բաղադրիչը ներկայումս իրականացվում է մասնակի՝ հիմնականում ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» (այսուհետ՝ ՀԿՏԿ) պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ)-ի ներուժի շրջանակներում: ՊՈԱԿ-ը իրականացնում է պետական հաղորդակցական քաղաքականության համակարգման և ապատեղեկատվության մոնիթորինգի առանձին բաղադրիչներ, սակայն միավորված և իրավական կարգավիճակով ապահովված համակարգող մարմին դեռևս գոյություն չունի: Բացի այդ, չի ընդունվել Կառավարության ընդհանուր հաղորդակցական ռազմավարությունը, չեն մշակվել արձագանքման միասնական հաղորդակարգերը, չի ներդրվել համապետական մակարդակի տեղեկատվական համակարգ:

Ինստիտուցիոնալ համակարգի լիարժեք ձևավորումը պահանջում է հինգ ուղղություններով համաժամանակյա առաջընթաց՝ համակարգող մարմնի ստեղծում, միջգերատեսչական ռազմավարության և հաղորդակարգերի ընդունում, կանխարգելիչ մոնիթորինգի և վաղ նախազգուշացման համակարգի հաստատում, թվային գործիքակազմի և տեխնոլոգիական հարթակների ներդրում, ինչպես նաև անձնակազմի մասնագիտական կարողությունների բարձրացում:

5.1.1. Ազգային համակարգող մարմնի ստեղծում

Հայեցակարգով և ԳԾ-ով պետությունը նպատակադրել է ամրապնդել ապատեղեկատվության հակազդման ինստիտուցիոնալ հիմքերը՝ ստեղծելով համակարգված հաղորդակցական քաղաքականություն և միջգերատեսչական համակարգման մեխանիզմներ: Այդ նպատակով ծրագրով նախատեսվել են երեք փոխկապակցված գործողություններ՝ Գործողություն 1.1.ա՝ հաղորդակցական ստորաբաժանումների կառուցվածքի քարտեզագրում և վերլուծություն, Գործողություն 1.1.բ՝ պետական կառույցների հաղորդակցական ստորաբաժանումների միասնական կառուցվածքի ձևավորում, ինչպես նաև՝ Գործողություն 2.1.ա՝ մասնավոր հատվածի (բիզնես, ՔՀԿ-ներ) հետ երկխոսության հարթակի ստեղծում:

Առաջին գործողությունը միտված էր պետական մարմինների հաղորդակցական ստորաբաժանումների ընթացիկ իրավիճակի գնահատմանը, դրանց գործառույթների վերլուծությանը և համակարգային բացերի բացահայտմանը՝ որպես ապագա կառույցի հիմք: Երկրորդ գործողությունը նախատեսում էր այդ վերլուծության հիման վրա մշակել միասնական կառուցվածք, որը կապահովեր պետական հաղորդակցական ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման և հաղորդակարգերի ներդաշնակություն: Երրորդ գործողությամբ նախատեսվում էր ձևավորել աշխատանքային խումբ, որը, ըստ Հայեցակարգի

համապատասխան 2.1 կետի, պետք է համակարգեր պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի փոխգործակցությունը՝ ապահովելով տեղեկատվական անվտանգության և հաղորդակցական քաղաքականության միասնական ուղղությունները։

Հաշվետվության համաձայն՝ 2024 թվականին նշված գործողություններից մի քանիսը կատարվել են մասնակի։ Շարունակվել են հաղորդակցության ստորաբաժանումների կառուցվածքի քարտեզագրման աշխատանքները ԱՄՆ ՄԶԳ Ռազմավարական հաղորդակցության աջակցության ծրագրի (այսուհետ՝ ՌՀԱԾ) շրջանակներում։ ՌՀԱԾ-ն իրականացրել է սոցիալական մեդիա հարթակներում պաշտոնական հաշիվների հավաքագրում, որի առաջին փուլի զեկույցը վերջնականացվել է 2024թ. դեկտեմբերին։

Բացի այդ, ՀԿՏԿ կողմից մշակվել և ընդունվել է «Ապատեղեկատվության դեմ պայքարի շրջանակում աշխատանքային խմբի ստեղծման և գործարկման վերաբերյալ կանոնակարգ»։ Աշխատանքային խմբում ընդգրկված են պետական, հասարակական, մասնավոր և միջազգային կազմակերպությունների, լրատվամիջոցների ներկայացուցիչներ։ Խմբի նպատակն է համախմբել շահագրգիռ բոլոր դերակատարներին մեկ հարկի տակ, ստեղծել երկխոսության հարթակ տարբեր համագործակցությունների համար և թույլ տալ համադրել ջանքերը ՀՀ ինստիտուտների կարողությունների զարգացման, պետություն-մասնավոր-ՔՀԿ կայուն երկխոսության հաստատման, մեդիագրագիտության և մեդիաազատությունների վերաբերյալ կրթության բարձրացման գործում։

Այնուամենայնիվ, ներկայիս իրավիճակը վկայում է, որ համակարգման գործող մեխանիզմը դեռևս զարգացման փուլում է և չի ապահովում անհրաժեշտ մակարդակի մշտական, ինստիտուցիոնալացված համագործակցություն պետական, հասարակական և մասնավոր դերակատարների միջև։ Աշխատանքային խումբը, թեև ստեղծված է և գործում է 2024 թվականից, չունի մշտական կառույցի իրավական կարգավիճակ և չի իրականացնում համակարգող մարմնի լիարժեք գործառույթները։ Բացակայում է հստակ որոշումների կայացման մեխանիզմ, պարտադիր հաշվետվողականության համակարգ և գերատեսչությունների համար պարտադիր առաջարկությունների իրավական ուժ։ Այս բացը լրացնելու համար անհրաժեշտ է անցում կատարել հայեցակարգային ձևակերպումներից դեպի ինստիտուցիոնալ մակարդակի իրականացում՝ ստեղծելով ազգային համակարգող մարմին՝ որպես մշտական միջգերատեսչական կառույց։

Նոր մարմինը պետք է ապահովի տեղեկատվական անվտանգության, հաղորդակցման, մեդիագրագիտության և արձագանքման ուղղությունների ամբողջական համադրվածություն։ Այս նպատակով առաջարկվում է **ձևավորել հատուկ աշխատանքային խումբ**, որը կվերլուծի միջազգային փորձը, կիրականացնի իրավիճակի գնահատում և կմշակի համակարգող մարմնի կառուցվածքի, իրավական կարգավիճակի եւ գործառույթների մանրամասն առաջարկ։

Հարկավոր է հստակեցնել մարմնի իրավական **կարգավիճակը**՝ գնահատելով, թե արդյոք նպատակահարմար է այն ձևավորել ՀԿՏԿ-ի կամ աշխատանքային խմբի հիմքի վրա՝ դրա գործառույթների ընդլայնմամբ, թե պետք է ստեղծել նոր անկախ պետական մարմին։ Նրա **կազմը** պետք է ներառի պետական, քաղաքացիական, մեդիա, տեղեկատվական տեխնոլոգիաների (այսուհետ՝ SS) և ակադեմիական հատվածների ներկայացուցիչներին՝ ապահովելով գործընկերային հավասարակշռություն և բոլոր շահագրգիռ կողմերի ներկայացվածություն։ Մասնավորապես, կարևոր է ներառել Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ հաշվի առնելով ընտրական գործընթացների բարձր տեղեկատվական ռիսկայնությունը՝ հատկապես 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների համատեքստում։

Մարմնի **գործառույթները** պետք է ընդգրկեն՝

- Պետական հաղորդակցական քաղաքականության համակարգում և մոնիթորինգ,
- Ապատեղեկատվական դեպքերի մշտադիտարկում և արագ արձագանքման համակարգում,

- Տեղեկատվական և կիբերանվտանգության ապահովում՝ համապատասխան պետական մարմինների հետ համակարգմամբ,
- Մեդիագրագիտության և կրթական ծրագրերի համակարգում,
- ՔՀԿ-ների, ԶԼՄ-ների և փաստերի ստուգման հարթակների հետ համագործակցության կազմակերպում,
- Սփյուռքի և միջազգային գործընկերների հետ կապի ապահովում՝ Հայաստանի մասին արտաքին տեղեկատվական դաշտի մոնիթորինգի և պաշտպանության նպատակով։

Համակարգող մարմնի կարևորագույն գործառույթներից մեկը Հայեցակարգի և դրա ԳԾ-ի իրականացման համակարգված մոնիտորինգն ու գնահատումն է։ Ներկայումս, թեև ԳԾ-ով նախատեսված էր առկա ռեսուրսների քարտեզագրումը և Հայեցակարգի իրականացման մշտադիտարկման մեթոդոլոգիայի մշակումը (գործողություն 2.1.ա), այս գործիքակազմը պաշտոնապես չի հաստատվել։ Այս բացը սահմանափակում է Հայեցակարգի առաջընթացի համակարգված գնահատման և ժամանակին շտկումների կատարման հնարավորությունները։

Համակարգող մարմինը պետք է մշակի և հաստատի **Հայեցակարգի իրականացման մոնիտորինգի և գնահատման մեթոդոլոգիա**, որը կսահմանի՝ մոնիտորինգի ցուցանիշների համակարգ՝ ԳԾ-ի յուրաքանչյուր գործողության առաջընթացի չափիչներով, տվյալների հավաքագրման, վերլուծության և հաշվետվության մեխանիզմներ, կիսամսյակային և տարեկան հաշվետվությունների ձևաչափ և բովանդակություն, արդյունավետության գնահատման չափանիշներ և մեթոդներ, շեղումների հայտնաբերման, վերլուծության և շտկման ընթացակարգեր և շահագրգիռ կողմերի (ՔՀԿ-ներ, մասնավոր հատված, ակադեմիական հանրություն) ներգրավման մեխանիզմներ գնահատման գործընթացում: Մեթոդոլոգիան պետք է ընդունվի համակարգող մարմնի ստեղծումից հետո 6 ամսվա ընթացքում և պետք է ապահովի թափանցիկություն՝ մոնիտորինգի արդյունքների պարբերական հրապարակմամբ և բաց մատչելիությամբ։

Բացի այդ, անհրաժեշտ է մշակել որոշումների կայացման, թափանցիկության և հաշվետվողականության հստակ մեխանիզմներ՝ ներառելով պարբերաբար հրապարակային հաշվետվությունների ներկայացում, շահագրգիռ կողմերի հետ կանոնավոր խորհրդակցություններ և մարմնի գործունեության անկախ գնահատման համակարգ։

5.1.2. Միջգերատեսչական հաղորդակցական ռազմավարության և հաղորդակարգերի ձևավորում

Ապատեղեկատվության դեմ արդյունավետ և համակարգված արձագանք ապահովելու համար առաջնահերթ է պետական կառույցների հաղորդակցական գործունեության միասնական ռազմավարական շրջանակի ձևավորումը։ Հայեցակարգով սահմանվել է, որ պետական գերատեսչությունների հաղորդակցական ստորաբաժանումների աշխատանքը պետք է հիմնվի ընդհանուր մեթոդաբանության վրա, որը կապահովի համահունչ հաղորդագրություններ, ճգնաժամային իրավիճակներում արագ արձագանքման հստակ մեխանիզմներ և տեղեկատվության փոխանակման միասնական համակարգ։

ԳԾ-ով այս նպատակով նախատեսվել են երեք փոխկապակցված գործողություններ՝ Գործողություն 1.1.դ՝ պետական կառույցների հաղորդակցական ռազմավարության և հաղորդակարգերի մշակման մեթոդաբանության ձևավորում, Գործողություն 1.1.ե՝ տարբեր իրավիճակներում հաղորդակցության հաղորդակարգերի /standard operating procedures/ մշակում և ընդունում և Գործողություն 1.1.զ՝ տեղեկատվության տարածման միասնական բրենդի ներդնում։

Գործողություն 1.1.դ-ն նախատեսում է Կառավարության ընդհանուր հաղորդակցության ռազմավարության մշակում և ընդունում, ռազմավարության կիրառման պարբերական գնահատում՝ տարին առնվազն մեկ անգամ, ինչպես նաև անձնակազմի համար սոցիալական մեդիա հարթակներում վարվելակերպի կանոնների և կիբերանվտանգության ուղեցույցի մշակում։ Հաղորդակցության ռազմավարությունը պետք է ապահովի Կառավարության

միասնական հաղորդակցությունը հանրության հետ՝ սահմանելով նպատակները, սկզբունքները, թիրախային լսարանները և ապատեղեկատվության դեմ պայքարի բաղադրիչը որպես ռազմավարական առաջնահերթություն։

Գործողություն 1.1.ե-ն նախատեսում է տարբեր իրավիճակներում հաղորդակցության հաղորդակարգերի (Standard Operating Procedures) մշակում։ Մասնավորապես՝ կեղծ տեղեկության տարածման մասշտաբների և ռիսկերի գնահատման չափորոշիչի, ապատեղեկատվությանն արձագանքելու հաղորդակարգի և մեխանիզմի մշակում և ներդրում, ստանդարտ իրավիճակներում, արտակարգ իրավիճակներում և արտաքին լսարանի հետ աշխատանքների համար հաղորդակարգերի մշակում։ Հաղորդակարգերում պետք է հստակ ամրագրված լինեն համակարգման մեխանիզմները, դերերը և պարտականությունների շրջանակը։

Գործողություն 1.1.զ-ն նախատեսում է «Մեկ կառավարություն» բրենդի մշակում և ներդրում՝ ապահովելու Կառավարության միասնական վիզուալ ներկայացումը բոլոր հաղորդակցական միջոցներում։ Գործողությունը ներառում է տարբեր գերատեսչությունների բրենդբուքերի հավաքագրում և վերլուծություն, աշխատանքային խմբի ձևավորում, միասնական բրենդի մշակում և բրենդինգի կիրառում պետական հաղորդակցության բոլոր միջոցներում։

Հաշվետվության համաձայն՝ 2024 թվականին ձևավորվել է պետական կառավարման մարմինների հաղորդակցության ոլորտի ղեկավարների միջև համագործակցության հարթակ և հաստատվել է աշխատանքի ձևաչափը։ Այնուամենայնիվ, Կառավարության ընդհանուր հաղորդակցության ռազմավարությունը չի մշակվել, հաղորդակցության հաղորդակարգերը չեն ընդունվել, սոցիալական մեդիայի վարվելակերպի կանոնները և կիբերանվտանգության ուղեցույցը չեն մշակվել, ապատեղեկատվության արձագանքման հաղորդակարգը չի ներդրվել, և «Մեկ կառավարություն» բրենդի կոնցեպտը չի մշակվել։

Հաշվետվության համաձայն՝ կատարվել են նախապատրաստական քայլեր. ՌՀԱԾ-ի շրջանակներում շարունակվել են Կառավարության ընդհանուր հաղորդակցության ռազմավարության և հաղորդակցության հաղորդակարգերի մշակման աշխատանքները։ Արտաքին գործերի նախարարության (այսուհետ՝ ԱԳՆ) կողմից արտերկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների սոցիալական հարթակներում առկա էջերը համապատասխանեցվել են կառավարության միասնական բրենդի ձևաչափին։ Բացի այդ, ԱԳՆ կողմից թարմացվել են արտերկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների համար սոցիալական հարթակների վարման միասնական ուղեցույցները, սակայն նշյալը վերաբերվում է ոչ թե Գործողություն 1.1.դ-ի շրջանակներում սոցիալական մեդիայում *անձնական* էջերին առնչվող վարվելակերպի կանոններին, այլ՝ Գործողություն 1.2.ա-ի շրջանակներում *պաշտոնական* սոցիալական հարթակների վարման կանոններին, որն ավելի մանրամասն ներկայացված է սույն փաստաթղթի «5.1.3. Կանխարգելիչ կառավարում և մոնիթորինգ» բաժնում։

Այդուամենայնիվ, Կառավարության ընդհանուր հաղորդակցության ռազմավարությունը չի մշակվել, հաղորդակցության հաղորդակարգերը չեն ընդունվել, սոցիալական մեդիայի անձնական վարվելակերպի կանոնները և կիբերանվտանգության ուղեցույցը չեն մշակվել պետական կառավարման մարմինների ողջ համակարգի համար, ապատեղեկատվության արձագանքման հաղորդակարգը չի ներդրվել, և «Մեկ կառավարություն» բրենդի կոնցեպտը չի մշակվել։

Գործողությունների մասնակի իրականացումը, որը սահմանափակվել է առանձին գերատեսչությունների մակարդակով՝ առանց միջգերատեսչական համակարգման ամբողջական մեխանիզմի հաստատման, ապացուցում է, որ համակարգային մոտեցումը դեռևս ձևավորման փուլում է։ Այս իրավիճակը ստեղծում է տեղեկատվական արձագանքման և հանրային հաղորդագրությունների անընդհատության խնդիրներ՝ հատկապես արագ զարգացող կամ զգայուն թեմաների պարագայում։

Համակարգային մոտեցման ձևավորման համար անհրաժեշտ է մշակել **միջգերատեսչական հաղորդակցական ռազմավարություն**, որը կհամադրի պետական կառույցների հաղորդակցական պլանները, կսահմանի ճգնաժամային արձագանքման արձանագրությունները և կներդնի հաղորդակարգերի (**SOP**) **համակարգ**: Վերջիններս պետք է ունենան երկու մակարդակ՝ **ընդհանուր հաղորդակարգեր**՝ տեղեկատվության ստացման, հաստատման, հաղորդագրությունների ձևավորման և հրապարակման միասնական կանոններով, և **հատուկ հաղորդակարգեր**՝ նախատեսված կոնկրետ իրավիճակների համար, օրինակ՝ ապատեղեկատվական հարձակումների, կիբերանվտանգության միջադեպերի կամ ընտրական գործընթացների շուրջ տեղեկատվական մանիպուլյացիաների դեպքում: Հաղորդակարգերի համակարգը պետք է ներառի նաև ապատեղեկատվության ռիսկերի գնահատման մեխանիզմներ: Անհրաժեշտ է մշակել և ընդունել **ապատեղեկատվության տարածման մասշտաբների և ռիսկերի գնահատման չափորոշիչներ**, որոնք կներառեն սպառնալիքի մակարդակների դասակարգում (ցածր, միջին, բարձր, կրիտիկական), արձագանքման ժամկետների մատրիցա յուրաքանչյուր մակարդակի համար, հնարավոր ազդեցության գնահատման ինդիկատորներ (շրջանառություն, ձայնի տոնայնություն, աուդիտորիայի չափ) և արձագանքման տիպի որոշման կանոններ (անտեսում, հերքում, պարզաբանում, իրավական գործողություններ):

Կարևոր է նաև ապահովել կոնտեքստային տեղեկատվության նախապատրաստում՝ որպես կանխարգելիչ մեխանիզմ: Անհրաժեշտ է ձևավորել **«ռիսկային» թեմաների բազա**՝ քարտեզագրման արդյունքների հիման վրա կազմելով ամենախոցելի թեմաների ցանկ և յուրաքանչյուր թեմայի համար նախապատրաստելով պաշտոնական տեղեկատվություն ու փաստաթղթեր, որոնք պարբերաբար կթարմացվեն: Պետք է մշակվեն **թեմատիկ ուղեցույցներ**, **հաճախակի տրվող հարցերի (FAQ) և պատասխանների շտեմարաններ, «միտքերի ստանդարտներ» (talking points) բարդ թեմաների համար**, ինչպես նաև պատասխանների տարբերակներ տարբեր լսարանների համար: Բացի այդ, անհրաժեշտ է մոդելավորել հնարավոր տեղեկատվական ճգնաժամներ, նախապատրաստել արձագանքման սցենարներ («եթե X պատահի, մենք անում ենք Y») և իրականացնել պարբերական սիմուլյացիոն վարժություններ՝ ստուգելու համակարգի պատրաստվածությունը:

Սոցիալական մեդիայի վարվելակերպի կանոնները և **կիբերանվտանգության ուղեցույ**ցը, որոնք մշակվել են ԱԳՆ համակարգի համար, պետք է ընդլայնվեն և ստանդարտացվեն ամբողջ պետական կառավարման համակարգում՝ ապահովելով պաշտոնական էջերի անվտանգության միասնական պրոտոկոլներ, բովանդակության ստեղծման ընդհանուր սկզբունքներ և ապատեղեկատվության հայտնաբերման համակարգված մեթոդներ: Այս ուղեցույցները պետք է ներառեն նաև **անձնական և ինստիտուցիոնալ հաշիվների օգտագործման սահմանագծումը, պաշտոնական հաղորդագրությունների հաստատման մեխանիզմները** և **սոցիալական հարթակներում ճգնաժամային իրավիճակների կառավարման պրոտոկոլները:**

Բացի պետական մարմինների արձագանքի մեխանիզմներից, հաղորդակարգերի համակարգը պետք է ներառի նաև **քաղաքացիական հասարակության, մեդիա կազմակերպությունների և փաստերի ստուգման հարթակների հետ համատեղ արձագանքման ձևաչափեր:** Այս մեխանիզմը կարող է ներառել ապատեղեկատվության դեպքերի արագ փոխանցման, փաստերի համատեղ հաստատման և հանրային պարզաբանումների համաձայնեցված ձևաչափեր, որոնք թույլ կտան կանխել կեղծ տեղեկությունների տարածումը նախքան դրանց զանգվածային շրջանառությունը:

Ռազմավարությունը պետք է ամրագրի հաղորդակցման փուլայնությունը՝ տեղեկատվության նախնական հաստատումից մինչև հանրային տարածում, ինչպես նաև հստակեցնի պատասխանատվության բաշխման, արագ համակարգման և ներքին հաղորդակցության կանոնները: Անհրաժեշտ է նաև ստեղծել **հաղորդակցական ծառայությունների կատարողականի գնահատման ցուցանիշներ**, որոնք կչափեն արձագանքման արագությունը, հաղորդագրությունների հետևողականությունը գերատեսչությունների միջև և հանրային ընկալման դինամիկան:

Բացի այդ, անհրաժեշտ է ռազմավարության **մշտադիտարկման և պարբերական թարմացման մեխանիզմ՝** պետական մարմինների, ՔՀԿ-ների, մասնավոր հատվածի և մեդիա ներկայացուցիչների մասնակցությամբ։ Այս ձևաչափը կապահովի հաղորդակցական համակարգի ճկունություն և վստահելի տեղեկատվական միջավայր՝ բարձրացնելով հանրային վստահությունը պետական հաղորդագրությունների նկատմամբ և նվազեցնելով ապատեղեկատվության ազդեցությունը։ Մշտադիտարկման մեխանիզմը պետք է ներառի **կիսամյակային գնահատումներ՝** վերլուծելով ապատեղեկատվության նոր միտումները, հաղորդակարգերի կիրառման արդյունավետությունը և համակարգի հարմարվողականության կարիքները։

5.1.3. Կանխարգելիչ կառավարում և մոնիթորինգ

Ապատեղեկատվության դեմ պայքարի արդյունավետությունը մեծապես կախված է կանխարգելիչ մեխանիզմներից՝ ապատեղեկատվության վաղ հայտնաբերման և արագ արձագանքման համակարգերից։ Հայեցակարգով և ԳԾ-ով նախատեսվում է ներդնել կանխարգելիչ մեխանիզմներ, որոնք թույլ կտան կանխատեսել և վերահսկել ապատեղեկատվության տարածումը մինչև դրա լայնածավալ շրջանառությունը՝ պետական կառույցների տեղեկատվական քաղաքականության և թվային հաղորդակցական կարողությունների զարգացմամբ։

Մասնավորապես, համաձայն Հայեցակարգի 1.2 կետի՝ պետական կառույցների պրոակտիվ հրապարակայնության բարձրացումը դիտարկվում է որպես ապատեղեկատվության կանխարգելման առանցքային գործիք։ Հայեցակարգով նախատեսվում է ներդնել կանխարգելիչ մեխանիզմներ, որոնք թույլ կտան կանխատեսել և վերահսկել ապատեղեկատվության տարածումը մինչև դրա լայնածավալ շրջանառությունը՝ պետական կառույցների տեղեկատվական քաղաքականության և թվային հաղորդակցական կարողությունների զարգացմամբ։ ԳԾ-ով 1.2 գործողությամբ նախատեսվել էր պետական կառույցների պրոակտիվ հրապարակայնության բարձրացում՝ սոցիալական մեդիա հարթակներում պետական ներկայության ինստիտուցիոնալացումով. պետք է իրականացվեր բոլոր պաշտոնական հաշիվների լիարժեք քարտեզագրում, սահմանվեր պաշտոնական հաշիվների փոխանցման կարգը՝ ինստիտուցիոնալ հիշողությունը և հասանելիությունների անվտանգ փոխանցումը ապահովելու համար, պաշտոնական էջերի կառավարումը տարանջատվեր անձնական հաշիվներից, իսկ պաշտոնական էջերի վարման համար մշակվեր և ներդրվեր միասնական ուղեցույց և վարվելակերպի կանոններ։

Հաշվետվության համաձայն այս բլոկից կատարվել է պաշտոնական հաշիվների հավաքագրումը (առաջին փուլի զեկույցը պատրաստ է) և դիվանագիտական ներկայացուցչությունների համար ուղեցույցների թարմացում, սակայն համապետական չափով փոխանցման կարգը, ինստիտուցիոնալ հաշիվների պարտադիր կիրառումը և միասնական վարքականոնի ընդունումն ու ներդրումը դեռ չեն արձանագրվել։

Սոցիալական մեդիայում պետական ներկայության ինստիտուցիոնալացումը փոխկապակցված է պետական մարմինների թափանցիկության և հաշվետվողականության մոնիթորինգի համակարգի հետ, որը նույնպես նախատեսված է որպես կանխարգելիչ մեխանիզմ: Մասնավորապես, ԳԾ-ում Գործողություն 1.3-ը նախատեսում է տեղեկատվության ազատության (այսուհետ՝ ՏԱ) ինքնագնահատման մեթոդաբանության ընդունում, ՏԱ պատասխանատու անձանց ինստիտուտի սահմանում, նրանց վերապատրաստում, ՏԱ ամենամյա ինքնագնահատման իրականացում, արդյունքների հրապարակում և դրանց հիման վրա վարկանիշային աղյուսակի ձևավորում:

Հաշվետվությամբ արձանագրված է ՏԱ ինքնագնահատման համակարգի մշակումն ու ներդրումը մի շարք մարմիններում, ինչպես նաև ուղեցույցի հրապարակումը և միջազգային հաստատումը, սակայն դեռևս չի արձանագրվել մեթոդաբանության համապետական ընդունումը, ՏԱ պատասխանատուների ինստիտուցիոնալ նշանակման միասնական կարգավորումը, պարտադիր վերապատրաստումների կազմակերպումը և ամենամյա ինքնագնահատման ամբողջական իրականացումն ու վարկանիշային աղյուսակի կազմումը բոլոր մարմինների համար:

Թեև Հայեցակարգը շեշտում է կանխարգելիչ մեխանիզմների կարևորությունը, ԳԾ-ում տեղ չեն գտել մի շարք էական կանխարգելիչ միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են ապատեղեկատվության արդյունավետ կանխարգելման և վաղ հայտնաբերման համար:

ԳԾ-ում չի նախատեսվել ապատեղեկատվության թեմատիկ քարտեզագրում և «կատալոգացում»: Բացակայում են վերջին տարիների ապատեղեկատվության թեմաների համակարգված ուսումնասիրություն, վերլուծություն և դասակարգում, ոլորտների և թիրախային խմբերի վերլուծություն, ինչպես նաև ապատեղեկատվության տարածման սխեմաների բացահայտում: Այս բացը խոչընդոտում է հասկանալ, թե որ թեմաները, ոլորտները և խմբերն են ամենախոցելի: Անհրաժեշտ է իրականացնել վերջին երեք տարիների **ապատեղեկատվության թեմաների համապարփակ ուսումնասիրություն և դասակարգում**՝ բացահայտելով ամենահաճախ կրկնվող թեմաները, նարատիվները, տարածման ալիքները, հիմնական աղբյուրները և ուղիները: Պետք է իրականացվի ոլորտային և թիրախային վերլուծություն՝ որոշելու ամենախոցելի ոլորտները և թիրախային խմբերը, ինչպես նաև քարտեզագրել տարածման սխեմաները՝ բացահայտելով ազդեցիկ հաշիվները և կոորդինացված արշավների հայտանիշները:

Նախատեսված չէ շուրջօրյա տեղեկատվական մոնիթորինգի համակարգի ստեղծում: Չկա հեռարձակվող և առցանց մեդիայի, սոցիալական ցանցերի և օտարերկրյա աղբյուրների մշտադիտարկման կազմակերպված համակարգ: Գործող պրակտիկան սահմանափակվում է ռեակտիվ (արձագանքող) մոտեցմամբ՝ երբ ապատեղեկատվությունը արդեն լայնածավալ տարածում է ստացել:
Համակարգող մարմնի կամ ՀԿՏԿ-ի կազմում անհրաժեշտ է ստեղծել **Մոնիթորինգի և վաղ նախազգուշացման կենտրոն**, որը կիրականացնի 24/7 մոնիթորինգ հայկական և օտարերկրյա մեդիայի, սոցիալական ցանցերի, սփյուռքի տեղեկատվական դաշտի և մեսենջերների: Կենտրոնը պետք է իրականացնի ռեալ ժամանակում ազդարարում՝ արագ հայտնաբերելով ապատեղեկատվությունը և անմիջապես ծանուցելով պատասխանատու կառույցներին, որոնք կգնահատեն ռիսկերի մակարդակը հաղորդակարգերով սահմանված չափորոշիչների համաձայն (տե՛ս 5.1.2)

Թեև ԳԾ-ում խոսվում է պրոակտիվ հրապարակայնության մասին, չեն նախատեսվել կոնկրետ միջոցառումներ պրոակտիվ տեղեկատվական քաղաքականության համակարգված մշակման համար: Անհրաժեշտ է ապահովել **24/7 հաղորդակցության համակարգ**՝ կազմակերպելով հերթափոխային աշխատանք և ստեղծելով հերթապահ խոսնակների ցանց:

5.1.4. Թվային կարողությունների զարգացում և տեխնիկական ապահովում

Ապատեղեկատվության դեմ արդյունավետ պայքարի համար անհրաժեշտ է ոչ միայն կառուցվածքային բարեփոխումներ, այլև պետական հաղորդակցական ստորաբաժանումների տեխնիկական կարողությունների հզորացում: Հայեցակարգը շեշտադրում է, որ ապատեղեկատվության հայտնաբերման, արձագանքման և չեզոքացման գործընթացները պահանջում են արդիական թվային գործիքներ, ավտոմատացված մոնիթորինգի համակարգեր և միջգերատեսչական տեղեկատվական փոխանակման համակարգված մեխանիզմներ:

Այս ուղղությունը ձևակերպված է Գործողություն 1.1.գ-ի շրջանակում՝ «*Պետական կառույցների հաղորդակցության ստորաբաժանումների համալրում տեխնիկական ռեսուրսներով*», որը նախատեսում է երեք հիմնական միջոցառում՝ պետական գերատեսչությունների հաղորդակցության ստորաբաժանումների ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների քարտեզագրում, ռեսուրսների վերաբաշխում և/կամ համալրում՝ ըստ կարիքների գնահատման և համապետական մակարդակով հանրային իրազեկման գործողությունների կենտրոնացված համակարգի ներդրում:

Հաշվետվության համաձայն՝ տեխնիկական կարողությունների զարգացման ուղղությամբ կատարվել են առանձին քայլեր, մասնավորապես՝ ՀԿՏԿ-ի ներքո հաղորդակցական հզորությունների զարգացման դասընթացներ և մեդիա մոնիթորինգի գործառույթների ընդլայնում: Այնուամենայնիվ, համապետական մակարդակով հանրային իրազեկման գործողությունների կենտրոնացված համակարգ դեռևս չի ներդրվել, ինչը սահմանափակում է արձագանքման արագությունը և միջգերատեսչական համակարգումը:

Թեև Հայեցակարգը շեշտադրում է թվային գործիքների կարևորությունը, ԳԾ-ում տեղ չեն գտել մի շարք էական տեխնոլոգիական միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են ապատեղեկատվության արդյունավետ հայտնաբերման և կանխարգելման համար:

Չի նախատեսվել ավտոմատացված վերլուծական գործիքների մշակում և ներդրում: Ապատեղեկատվության արդյունավետ հայտնաբերման համար անհրաժեշտ են բոտերի և ավտոմատացված հաշիվների հայտնաբերման համակարգեր, վիզուալ բովանդակության վավերացման մեխանիզմներ (deepfake detection), տեքստային վերլուծության ալգորիթմներ և սոցիալական ցանցերի մոնիթորինգի արհեստական բանականության հիմքով գործող լուծումներ: Առանց այս գործիքների՝ մոնիթորինգը մնում է ձեռքով իրականացվող, դանդաղ և անհամապարփակ գործընթաց: Անհրաժեշտ է մշակել և **ներդնել ավտոմատացված վերլուծական համակարգ**, որը կկարողանա իրական ժամանակում վերլուծել տեքստային և վիզուալ բովանդակությունը, հայտնաբերել կասկածելի օրինաչափություններ (օրինակ՝ կոորդինացված հաշիվների ցանցեր, արհեստական ձայնի տարածում), նույնականացնել մանուպուլացված տեսանյութեր և լուսանկարներ, և կազմել ավտոմատ ազդարարումներ պատասխանատու մարմինների համար:

Բացի այդ, համապետական իրազեկման համակարգի բացակայությունը սահմանափակում է միջգերատեսչական համակարգումը: Գործողություն 1.1.գ-ում նախատեսված համապետական իրազեկման համակարգի ներդրումը ենթադրում է ապատեղեկատվության դեմ պայքարի թվային հարթակի ձևավորում: Այս հարթակը կարող է կառուցվել կա՛մ ՊՈԱԿ-ի գործող մեդիա մոնիթորինգի կայքի հիմքի վրա՝ դրա գործառույթների ընդլայնմամբ, կա՛մ որպես առանձին պետական տեղեկատվական համակարգ՝ ապահովելով միջգերատեսչական տվյալների փոխանակում, արագ արձագանքում և հաղորդակցական գործընթացների ավտոմատացում: Կարևոր է նշել, որ ՀՀ-ում գործող Malberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը, թեև ապահովում է պետական մարմինների միջև պաշտոնական հաղորդակցություն, սակայն չի նախատեսված տեղեկատվական քաղաքականության կամ ապատեղեկատվության դեպքերի վերաբերյալ տվյալների փոխանակման համար: Malberry-ն կարող է օգտագործվել որպես վարչական հաղորդակցության գործիք (օրինակ՝ հաստատված հաղորդագրությունների փոխանակման կամ արձագանքման հուշագրերի փոխանցման համար), սակայն չի բավարարում ապատեղեկատվության մոնիթորինգի, վերլուծության և միջգերատեսչական համակարգման տեխնիկական պահանջներին:

Անհրաժեշտ է ստեղծել **նպատակային թվային հարթակ**, որը կներառի հետևյալ գործառույթները՝ ապատեղեկատվության դեպքերի կենտրոնացված հաշվառում և կատեգորիզացում, իրական ժամանակի ծանուցումների համակարգ բոլոր շահագրգիռ կառույցների համար, հաղորդագրությունների նախագծերի համատեղ մշակման և հաստատման մեխանիզմներ, արձագանքման գործողությունների համակարգման և արդյունքների հետևման գործիքներ,

վերլուծական դաշբորդ (dashboard) ապատեղեկատվության միտումների և ազդեցության մոնիթորինգի համար, փաստերի ստուգման հարթակների և մեդիա կազմակերպությունների հետ տեղեկատվական փոխանակման ինտերֆեյս: Հարթակը պետք է ապահովի տվյալների անվտանգություն, մուտքի սահմանափակում՝ ըստ օգտատերերի դերերի, և ինտեգրում տարբեր սոցիալական մեդիա հարթակների API-ների հետ՝ ավտոմատ տվյալների հավաքագրման համար:

Թվային կարողությունների զարգացումը ներառում է նաև **կիբեռանվտանգության ընդհանուր ենթակառուցվածքների ուժեղացումը**: Թեև «Կիբեռանվտանգության մասին» օրենքի ընդունումը և գործարկումը ավելի լայն օրակարգի մաս է և անմիջականորեն չի վերաբերում ապատեղեկատվության դեմ պայքարին, սակայն այն կապահովի պետական թվային համակարգերի անվտանգությունը և կստեղծի հիմք ապատեղեկատվության հայտնաբերման տեխնոլոգիական լուծումների անվտանգ ներդրման համար:

5.1.5. Մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացում

Ապատեղեկատվության դեմ պայքարի արդյունավետությունը մեծապես կախված է պետական կառույցների հաղորդակցության մասնագետների կարողություններից, գիտելիքներից և հմտություններից: Հայեցակարգով սահմանվել է, որ անձնակազմի մասնագիտական զարգացումը պետք է իրականացվի համակարգված և շարունակական հիմունքներով՝ ապահովելով ապատեղեկատվության հայտնաբերման, վերլուծության և հակազդեցության գործնական կարողությունների ձևավորումը:

ԳԾ-ով այս նպատակով նախատեսվել են երկու փոխկապակցված գործողություններ՝ Գործողություն 3.4.ա՝ Կանոնավոր մասնագիտական վերապատրաստումներ և անձնակազմի հաղորդակցության կարողությունների զարգացում ապատեղեկատվությունը կանխելու, բացահայտելու և հակազդելու նպատակով և Գործողություն 3.4.բ՝ Մասնագիտական գիտելիքի և աշխատանքային ունակությունների կատարելագործման ապահովում:

Գործողություն 3.4.ա-ն նախատեսում է հաղորդակցության և ապատեղեկատվության դեմ պայքարի ոլորտում պետական կառավարման մարմինների աշխատակազմի վերապատրաստման կարիքների համապարփակ գնահատում, որը պետք է իրականացվի առնվազն երկու տարին մեկ անգամ: Կարիքների գնահատման արդյունքների հիման վրա պետք է մշակվեն կրթական ծրագրեր՝ եռամակարդակ համակարգով՝ գերատեսչության ղեկավար կազմի, հաղորդակցության համար պատասխանատուների և գերատեսչության անձնակազմի համար՝ մեդիագրագիտության, փաստերի ստուգման, կիբերանվտանգության, սոցիալական մեդիա հարթակներում աշխատանքի կազմակերպման վերաբերյալ: Նախատեսվում է նաև սահմանամերձ համայնքների ներկայացուցիչների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում՝ արտակարգ իրավիճակներում ապատեղեկատվության դեմ պայքարի համատեքստում, ինչպես նաև վերապատրաստման դասընթացների գնահատման մեխանիզմի ներդրում:

Գործողություն 3.4.բ-ն նախատեսում է պետական կառավարման մարմինների անձնակազմի համար կրթական և կիրառական ռեսուրսների/ուղեցույցների մշակում՝ այդ թվում՝ առցանց հասանելիությամբ՝ ապատեղեկատվության դեմ պայքարի գործնական խորհուրդներով, փաստերի ստուգման կիրառական գործիքակազմով: Պետք է մշակվեն և ընդունվեն սոցիալական մեդիա հարթակներում վարվելակերպի կանոնների և կիբերհարթակում անվտանգության կանոնների ուղեցույց (կրկնվում է Գործողություն 1.1.դ-ի հետ), ինչպես նաև բարելավվեն պետական կառավարման մարմինների անձնակազմի մոնիթորինգային կարողությունները:

Հաշվետվության համաձայն՝ 2024 թվականին վերապատրաստումներ են անցկացվել ՀՀ կառավարության հաղորդակցության թիմերի, նախարարությունների և պետական գերատեսչությունների ներկայացուցիչների համար՝ ռազմավարական հաղորդակցության, մեդիաազատությունների, մեդիագրագիտության և արհեստական բանականության գործիքների կիրառման թեմաներով:

Այնուամենայնիվ, համապարփակ կարիքների գնահատումը չի իրականացվել, եռամակարդակ վերապատրաստման համակարգը չի ստեղծվել, սահմանամերձ համայնքների ներկայացուցիչների վերապատրաստումները չեն իրականացվել, կրթական և կիրառական ուղեցույցները չեն մշակվել, իսկ սոցիալական հարթակներում աշխատանքի և կիբերանվտանգության թեմաներով վերապատրաստումներ չեն անցկացվել:

Նշյալից բխում է, որ վերապատրաստումները կրել են կետային բնույթ և սահմանափակվել են առանձին գերատեսչություններով՝ առանց համակարգային մոտեցման: Կարիքների գնահատման բացակայությունը հանգեցրել է այն, որ վերապատրաստումները չեն արձագանքել անձնակազմի իրական կարիքներին և գիտելիքների բացերին: Բացի այդ, վերապատրաստումների արդյունավետության գնահատման մեխանիզմը չի ներդրվել, ինչը թույլ չի տալիս չափել ստացված գիտելիքների կիրառելիությունը գործնականում:

Համակարգային մոտեցման ձևավորման համար անհրաժեշտ է իրականացնել **համապարփակ կարիքների գնահատում**՝ օգտագործելով ինքնագնահատման հարցաշարեր, պրակտիկ կարողությունների թեստավորում և միջազգային լավագույն պրակտիկայի հետ համեմատական վերլուծություն: Պետք է մշակվի **կարողությունների մատրիցա**, որը կսահմանի յուրաքանչյուր մակարդակի համար անհրաժեշտ գիտելիքները և հմտությունները՝ սկսնակ մասնագետից մինչև փորձագետ: Վերապատրաստումների ծրագիրը պետք է լինի **մոդուլային**՝ թույլ տալով անձնակազմի անդամներին ընտրել իրենց կարիքներին համապատասխան դասընթացներ:

Անհրաժեշտ է ստեղծել **մասնագիտական սերտիֆիկացիայի համակարգ**, որը կճանաչի հաղորդակցության ոլորտում աշխատող պետական ծառայողների կարողությունները և կխթանի շարունակական մասնագիտական զարգացումը: Սերտիֆիկացիան պետք է ներառի տեսական գիտելիքների ստուգում, պրակտիկ հմտությունների ցուցադրում, դեպքերի վերլուծություն, ինչպես նաև գործնական նախագծի ներկայացում՝ օրինակ՝ հակապատեհեկատվական արշավի պլանի, հաղորդակցության ռազմավարության կամ մեդիագրագիտության ուսումնական մոդուլի ձևով: Սերտիֆիկատների վավերականության ժամկետը պետք է լինի 3 տարի՝ վերասերտիֆիկացման պահանջներով:

Կրթական և կիրառական **ուղեցույցները** պետք է ներառեն ապատեղեկատվության հայտնաբերման գործնական ալգորիթմներ, փաստերի ստուգման քայլ առ քայլ ինստրուկցիաներ, սոցիալական մեդիա մշտադիտարկման գործիքակազմ, կրիզիսային հաղորդակցության ձևաչափեր և դեպքերի ուսումնասիրություններ: Ուղեցույցները պետք է հասանելի լինեն թվային ձևաչափով՝ թույլ տալով անձնակազմին ցանկացած պահի դիմել անհրաժեշտ տեղեկատվությանը:

Սահմանամերձ համայնքների ներկայացուցիչների վերապատրաստումները պետք է կենտրոնանան արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման, տեղեկատվության հաստատման և տեղական համայնքների հետ հաղորդակցության վրա: Այս վերապատրաստումները հատկապես կարևոր են հիբրիդային սպառնալիքների և տեղեկատվական գրոհների համատեքստում, երբ սահմանամերձ համայնքները դառնում են ապատեղեկատվության առաջին թիրախը:

Բացի պարտադիր վերապատրաստումներից, անհրաժեշտ է ստեղծել **շարունակական մասնագիտական զարգացման հնարավորություններ**՝ գիտելիքների կառավարման համակարգի, փորձի փոխանակման հարթակների և մենթորինգի ծրագրերի միջոցով: Պետք է ձևավորվի գիտելիքների բազա լավագույն պրակտիկայի օրինակներով, հաջողված և ձախողված

արշավների դեպքերի ուսումնասիրություններով և ուղեցույցների հավաքածուով։ Փորձառու մասնագետները պետք է ներգրավվեն որպես մենթորներ՝ ապահովելով գիտելիքների փոխանցումը և նոր անձնակազմի ադապտացիան։

Վերապատրաստումների արդյունավետության գնահատումը պետք է իրականացվի բազմամակարդակ՝ դասընթացի ավարտից անմիջապես հետո՝ **գիտելիքների ստուգման միջոցով**, 3-6 ամիս հետո՝ հմտությունների կիրառելիության գնահատման միջոցով, և տարեկան՝ ընդհանուր կատարողականի վրա ազդեցության չափման միջոցով։ Գնահատման արդյունքները պետք է օգտագործվեն վերապատրաստման ծրագրերի բարելավման և նոր կարիքների բացահայտման համար։

5.2. Համագործակցություն

Համագործակցությունը ապատեղեկատվության դեմ պայքարի անկյունաքարն է, որն ապահովում է «Ամբողջ հասարակության» մոտեցման արդյունավետ իրականացումը: Շահագրգիռ կողմերի միջև համակարգված փոխազդեցությունը, փորձի փոխանակումը և միավորված գործողությունները թույլ են տալիս ստեղծել ապատեղեկատվության դիմակայման կայուն էկոհամակարգ, որտեղ յուրաքանչյուր դերակատար օժտված է համապատասխան կարողություններով և հստակ դերակատարությամբ:

Պետական մակարդակով Հայեցակարգով և դրա ԳԾ-ով նախատեսվել է պետական-մասնավոր-ՔՀԿ համագործակցության հարթակի ստեղծում և աշխատանքային խմբի ձևավորում՝ որպես համակարգող մեխանիզմ: Գործնականում կատարվել են առանձին քայլեր՝ ստեղծվել է աշխատանքային խումբ, իրականացվել են հանդիպումներ տարբեր շահագրգիռ կողմերի հետ, մեկնարկել են առանձին նախաձեռնություններ: Այնուամենայնիվ, նախատեսված համագործակցության բաղադրիչը ներկայումս իրականացվում է մասնակի և ոչ համակարգված: Բացակայում են կայուն ֆինանսավորման մեխանիզմները ՔՀԿ-ների և փաստերի ստուգման հարթակների համար, չի ձևավորվել սոցիալական հարթակների հետ համակարգված երկխոսության մեխանիզմ, սահմանափակ է մասնավոր հատվածի և ՏՏ ընկերությունների ներգրավվածությունը, թերի է սփյուռքի հետ տեղեկատվական համագործակցությունը, իսկ միջազգային հարթակում Հայաստանի ներգրավվածությունը դեռևս զարգացման փուլում է: Բացի այդ, չի ստեղծվել միջոլորտային համագործակցության ինստիտուցիոնալ շրջանակ, չեն մշակվել համագործակցության հստակ մեխանիզմներ և չափանիշներ, և բացակայում է համագործակցության արդյունքների գնահատման համակարգ:

Համագործակցության համակարգի լիարժեք ձևավորումը պահանջում է վեց ուղղություններով համաժամանակյա առաջընթաց՝ ՔՀԿ-ների հետ ինստիտուցիոնալացված գործընկերության հաստատում, մասնավոր հատվածի և ՏՏ ընկերությունների ակտիվ ներգրավում, ԶԼՄ-ների հետ կայուն փոխգործակցության մեխանիզմների ստեղծում, փաստերի ստուգման հարթակների զարգացման աջակցություն, սփյուռքի համակարգված ներգրավում, ինչպես նաև միջազգային համագործակցության խորացում և փորձի փոխանակման մեխանիզմների հաստատում:

5.2.1 ՔՀԿ-ների հետ համագործակցություն

Ապատեղեկատվության դեմ արդյունավետ պայքարը հնարավոր չէ առանց քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավվածության և պետության հետ համակարգված գործողությունների: Հայեցակարգը որպես առանցքային ուղղություն սահմանել է աշխատանքային խմբի ստեղծումը՝ ՔՀԿ-ների ներկայացուցիչներով, որը պետք է ապահովի փոխգործակցության կայուն հարթակ:

ՀԿՏԿ կողմից մշակվել և ընդունվել է «Ապատեղեկատվության դեմ պայքարի շրջանակում աշխատանքային խմբի ստեղծման և գործարկման վերաբերյալ կանոնակարգը», և աշխատանքային խումբը ձևավորվել է՝ ընդգրկելով ՔՀԿ ներկայացուցիչներ: Այնուամենայնիվ, ռեսուրսների քարտեզագրումը չի իրականացվել ամբողջությամբ, թեև որոշ ՔՀԿ-ներ իրականացնում են մեդիագրագիտության և փաստերի ստուգման դասընթացներ: Ինչպես նշվել է 5.1.1 բաժնում, ներկայիս աշխատանքային խումբը անհրաժեշտ է վերափոխել Ապատեղեկատվության դեմ պայքարի համակարգող խորհրդի՝ որպես անկախ մարմին՝ հստակ մանդատով, առանձին բյուջեով և իրավական կարգավիճակով: Նաև չի հաստատվել Հայեցակարգի իրականացման մշտադիտարկման մեթոդոլոգիան, որի մշակման **անհրաժեշտությունը և պահանջները մանրամասնորեն ներկայացված են նույն բաժնում:**

ԳԾ-ն նախատեսում է համագործակցային ֆինանսավորման մեխանիզմներ միայն մասնավոր ընկերությունների համար (գործողություն 2.4.ա), մինչդեռ ՔՀԿ-ները մնում են ֆինանսական աջակցությունից դուրս։ Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՔՀԿ-ներն ունեն կարևոր դեր ապատեղեկատվության դեմ պայքարում։ Մասնավորապես, Լիտվայում գործում է «Elves» կամավորական շարժումը՝ ավելի քան 3000 կամավորով, որոնք մոնիտորինգ են անում սոցիալական ցանցերը, հայտնաբերում և հերքում ռուսական ապատեղեկատվությունը։ Շարժումը սերտորեն համագործակցում է Լիտվայի կառավարության հետ՝ կանոնավոր փոխանակելով տեղեկատվություն և համատեղ արձագանքելով տեղեկատվական սպառնալիքներին։ «Elves»-ը ստացել է պետական աջակցություն և ճանաչում որպես ազգային անվտանգության կարևոր բաղադրիչ։

Լիտվայի օրինակով՝ անհրաժեշտ է **մշակել դրամաշնորհային ծրագիր ՔՀԿ-ների համար**, որը կաջակցի մեդիագրագիտության, փաստերի ստուգման և ապատեղեկատվության դեմ պայքարի նորարարական նախագծերին։ Պետք է խրախուսել և ֆինանսապես աջակցել կամավորական նախաձեռնություններին, որոնք կմոնիտորինգ անեն սոցիալական ցանցերը, կստեղծեն հակահարվածային բովանդակություն և կտարածեն ճշմարիտ տեղեկատվություն։

Անհրաժեշտ է նաև **ստեղծել տեղեկատվական բազա՝ բաց տվյալներով, որը հասանելի կլինի ՔՀԿ-ներին** հետազոտությունների և վերլուծությունների համար։ Տվյալների բազան պետք է ներառի ապատեղեկատվության դեպքերի վերաբերյալ տեղեկություններ, վերլուծություններ և լավագույն փորձի օրինակներ, ինչպես նաև ապահովի տեղեկատվության շարունակական թարմացման և պետական մարմինների ու ՔՀԿ-ների միջև փոխանակման մեխանիզմ։

5.2.2 Մասնավոր հատվածի/ՏՏ հատվածի հետ համագործակցություն

Հայեցակարգը մեծ կարևորություն է տալիս մասնավոր հատվածի մոբիլիզացմանը և ներգրավմանը։ Նախատեսվել է մասնավոր հատվածի հետ կայուն համագործակցության մեխանիզմների ստեղծում և ապատեղեկատվության դեմ պայքարի նորարարական լուծումների ֆինանսավորում (գործողություն 2.4.ա), մասնավոր հատվածի հաշվետվողականության ու թափանցիկության խթանում (գործողություն 2.4.բ) և սոցիալական հարթակների հետ ուղիղ երկխոսության խողովակների ստեղծում (գործողություն 2.4.գ)։

ԳԾ-ն նախատեսում էր 2024թ. մշակել համագործակցության մեխանիզմները և նորարարական լուծումների աջակցության մեթոդաբանությունը, իսկ 2025թ. գործարկել դրանք և ֆինանսավորել առնվազն երեք նորարարական գաղափար տարեկան։ Սակայն Հաշվետվությունը ցույց է տալիս, որ այս ուղղությունը գրեթե չի իրականացվել։ Բացակայում են համակարգված մեխանիզմներ ՏՏ ընկերությունների, սոցիալական հարթակների հետ համագործակցության համար, չի գործարկվել ինովացիոն ծրագիր, չեն ստեղծվել խրախուսման մեխանիզմներ։

Լիտվայում գործում է Debunk EU-ն, որը օգտագործում է արհեստական բանականություն ապատեղեկատվությունն հայտնաբերելու համար,

Անհրաժեշտ է Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ ԲՏԱՆ) գլխավորությամբ անհապաղ մշակել և գործարկել **Ապատեղեկատվության դեմ պայքարի տեխնոլոգիական լուծումների ինովացիոն ֆոնդ** (ի կատարումն գործողություն 2.4.ա.1)։ Ֆոնդը պետք է տրամադրի տարեկան առնվազն 5 դրամաշնորհ՝ յուրաքանչյուրը 10-50 մլն դրամ՝ ապատեղեկատվության հայտնաբերման, մոնիտորինգի, փաստերի ստուգման ավտոմատացման, AI-ի կիրառման համար։

Ապատեղեկատվության դեմ պայքարի համակարգող մարմինը պետք է համակարգի մասնավոր հատվածի հետ համագործակցությունը՝ ներառելով տեխնոլոգիական ընկերությունների

ներկայացուցիչների մասնակցությունը իր կազմում: Մարմինը կապահովի պետական պատվերի, մասնավոր ներդրումների և միջազգային ֆինանսավորման համախմբումը նորարարական լուծումների համար:

Կարևոր է հաստատել գործողություն 2.4.գ-ում նախատեսված սոցիալական հարթակների հետ երկխոսության մեխանիզմները: Պետք է ստեղծել **Հայաստան-Տեխ հարթակներ համագործակցության հանձնաժողով՝** Facebook, Google, TikTok, Telegram, X ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանձնաժողովը կքննարկի ալգորիթմների թափանցիկություն, բովանդակության մոդերացիա, կեղծ հաշիվներ, պատասխանատու գովազդ, արագ արձագանքում ապատեղեկատվության զանգվածային տարածման դեպքերում:

Անհրաժեշտ է **համագործակցել հեռահաղորդակցության օպերատորների հետ՝** մշակելու արագ արձագանքման մեխանիզմներ զանգվածային SMS կեղծ հաղորդագրությունների, ֆիշինգի և այլ թվային սպառնալիքների դեպքում:

Անհրաժեշտ է իրականացնել գործողություն 2.4.բ.՝ իրազեկման արշավներ և խրախուսման մեխանիզմների ներդրում: Մշակել **«Պատասխանատու բիզնես» սերտիֆիկացման համակարգ**, որը կճանաչի այն ընկերություններին, ովքեր թափանցիկ են, պահպանում են էթիկայի ստանդարտները և ակտիվ են ապատեղեկատվության դեմ պայքարում իրենց կորպորատիվ սոցիալական պատասխանատվության նախագծերում: Նախատեսել **հարկային արտոնություններ, պետական գովազդի առաջնահերթություն** այդպիսի ընկերությունների համար:

5.2.3 ԶԼՄ-ների հետ համագործակցություն

Հայեցակարգը մեդիայի հետ համագործակցությունը դիտարկում է որպես ապատեղեկատվության դեմ պայքարի կարևոր բաղադրիչ՝ կենտրոնանալով մեդիա ինքնակարգավորման և մասնագիտական ստանդարտների ամրապնդման վրա: ԳԾ-ով նախատեսվել է մեդիա ինքնակարգավորման զարգացման ծրագրի մշակում և ընդունում, արտոնությունների փաթեթի մշակում ինքնակարգավորմանն միացած մեդիաների համար (գործողություն 2.3.ա), ինչպես նաև Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ՝ ՀՌՀ) լիազորությունների ընդլայնում՝ ներառելով մեդիագրագիտության զարգացումը և հանրային իրազեկման արշավների իրականացումը (գործողություն 2.3.բ):

ԳԾ-ով սահմանված էր 2024թ. համատեղ մշակել օրենսդրական փոփոխություններ և մշտադիտարկման մեխանիզմներ, 2025թ. ընդունել փոփոխությունները և մեկնարկել մշտադիտարկումը, իսկ 2026թ. ապահովել լիարժեք գործունեությունը: Սակայն հաշվետվության համաձայն՝ մեդիա ինքնակարգավորման զարգացման ծրագիրը դեռ չի ընդունվել, արտոնությունների մեխանիզմները չեն մշակվել, ՀՌՀ-ի լիազորությունները չեն ընդլայնվել:

Լիտվայում գործում է երկմակարդակ մեդիա կարգավորման համակարգ: Լիտվական լրագրողների և հրատարակիչների էթիկայի հանձնաժողովը իրականացնում է ինքնակարգավորում՝ որպես անկախ մարմին, որը կազմված է մեդիա ոլորտի ներկայացուցիչներից և քննարկում է էթիկայի խախտումների դիմումներ: Համակարգին համալրում է Լրագրողների էթիկայի տեսչարանի գրասենյակը՝ պետական վերահսկողական մարմին, որը պատասխանատու է անձնական տվյալների պաշտպանության և ատելության խոսքի դեպքերի գնահատման համար: Այս համակարգը վայելում է վստահություն և ապահովում է արդյունավետ համագործակցություն մեդիա կազմակերպությունների և պետական կառույցների միջև:

Լիտվայի փորձը ցույց է տալիս, որ արդյունավետ մեդիա ինքնակարգավորումը հնարավոր է հստակ ինստիտուցիոնալ հիմքերի առկայությամբ, ինչպես Լիտվայում, սակայն դրա

երկարաժամկետ կայունությունն ապահովելու համար անհրաժեշտ են նաև մեդիաների ներգրավվածությունն ու խթանային մեխանիզմները։

Առաջին՝ համագործակցելով լրագրողական համայնքի հետ՝ անհրաժեշտ է ընդունել **մեդիա ինքնակարգավորման զարգացման ծրագիրը։** Ծրագիրը պետք է սահմանի ինքնակարգավորման մարմինների ստեղծման և գործարկման սկզբունքները, չափորոշիչները և աջակցության մեխանիզմները։

Երկրորդ՝ անհրաժեշտ է մշակել և օրենսդրորեն ամրագրել **արտոնությունների հստակ փաթեթ այն մեդիաների համար, որոնք միանում են ինքնակարգավորման մարմիններին և հետևողական են էթիկայի պահպանման հարցում**։ Արտոնությունները կարող են ներառել հարկային արտոնություններ, պետական գովազդի առաջնահերթություն և արագացված ակրեդիտացիա։

Երրորդ՝ անհրաժեշտ են **օրենսդրական փոփոխություններ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում՝ ընդլայնելու ՀՌՀ-ի լիազորությունները մեդիագրագիտության զարգացման ոլորտում**։ Հանձնաժողովը պետք է իրականացնի տարեկան մոնիտորինգ մեդիագրագիտության մակարդակի, մեդիաների էթիկայի պահպանման և ինքնակարգավորման զարգացման վերաբերյալ։

Չորրորդ՝ ՀՌՀ-ն պետք է իրականացնի **իրազեկման արշավներ մեդիաների դերի, ինքնակարգավորման մարմինների գործառույթների և իրական շահառուների թափանցիկության կարևորության վերաբերյալ։** Արշավները պետք է օգտագործեն հանրային հեռուստատեսություն, սոցիալական ցանցեր և կրթական հաստատություններ։

Վերջապես, կարևոր է ապահովել **մեդիաների իրական շահառուների թափանցիկության կարգավորումների լիարժեք կիրառումը։** Անհրաժեշտ է բարելավել բաց ռեգիստրի հասանելիությունը՝ ստեղծելով օգտագործողի համար հարմար հարթակ, որտեղ քաղաքացիները արագ կտեսնեն ցանկացած մեդիայի սեփականության կառուցվածքը, և իրականացնել հանրային իրազեկման արշավներ՝ բացատրելով թափանցիկության կարևորությունը մեդիա վստահելիության համար։

5.2.4 Փաստերի ստուգման հարթակների հետ համագործակցություն

Հայեցակարգը հստակորեն նախատեսում է փոխգործակցություն փաստեր ստուգող հարթակների հետ։ Գործողություն 2.2.ա-ում սահմանված է փաստերի ստուգման հարթակների քարտեզագրում, նրանց հետ համագործակցության մեխանիզմների հստակեցում և կանոնավոր հետադարձ կապի հաստատում։

ԳԾ-ով սահմանված էր պարբերական և փուլային մոտեցում՝ 2024թ. քարտեզագրել հարթակները և նախանշել փոխգործակցության ուղղությունները, 2025թ. ստեղծել և ներդնել համագործակցության մեխանիզմներ, իսկ 2026թ. ապահովել հարթակների ակտիվ առաջխաղացումը։ Սակայն հաշվետվությամբ չի ներկայացվել տեղեկատվություն այս գործողությունների կատարման վերաբերյալ։ Փաստերի ստուգման հարթակները շարունակում են գործել առանձին, համակարգված համագործակցություն պետության հետ գրեթե բացակայում է։ Չկա ինստիտուցիոնալացված մեխանիզմ, որը կապահովի տեղեկատվության արագ փոխանակում և համատեղ արձագանք։

Լիտվայում գործող Debunk EU հարթակը (տե՛ս բաժին 5.2.2) արձակագրում է հաջողված համագործակցության մոդել՝ պարբերաբար փոխանակելով տեղեկատվություն պետական ռազմավարական հաղորդակցության ստորաբաժանումների հետ և օգտագործելով տեխնոլոգիական գործիքներ ապատեղեկատվության մոնիտորինգի և վերլուծության համար։

Հայաստանում նմանատիպ համագործակցության համակարգի ստեղծումը պահանջում է հետևյալ քայլերը: Նախ, անհրաժեշտ է քարտեզագրել բոլոր ՔՀԿ-ներին, ԶԼՄ-ներին և կառույցներին, որոնք հանդես են գալիս որպես փաստերի ստուգման հարթակներ, և ստեղծել **հրապարակային ռեեստր՝** ներառելով կազմակերպությունների կոնտակտները, մասնագիտացման ոլորտները, օգտագործվող մեթոդաբանությունը և փաստերի ստուգման ստանդարտները: Ռեեստրը պետք է պարբերաբար թարմացվի և հասանելի լինի ինչպես պետական մարմիններին, այնպես էլ լայն հանրությանը:

Համակարգող մարմինը պետք է ստեղծի **պետական գերատեսչությունների և փաստերի ստուգման հարթակների միջև համակարգված կապի համակարգ՝** նշանակելով պատասխանատու անձանց, որոնք պարտավոր են 24 ժամվա ընթացքում պատասխանել փաստերի ստուգողների հարցումներին: Անհրաժեշտ է մշակել հարցումներին արձագանքման ստանդարտ պրոտոկոլ՝ հստակ ժամկետներով, պատասխանատվության բաշխմամբ և արձագանքի որակի չափորոշիչներով:

Համակարգող մարմինը պետք է նախաձեռնի **Փաստերի ստուգման ազգային կոալիցիայի ստեղծումը՝** փաստերի ստուգման հարթակների, պետական մարմինների և մեդիաների մասնակցությամբ: Կոալիցիան կապահովի փորձի փոխանակում, համատեղ նախագծերի իրականացում, մեթոդաբանական զարգացում և միջազգային ստանդարտների տեղայնացում: Կոալիցիայի շրջանակներում անհրաժեշտ է մշակել արտակարգ իրավիճակների արագ արձագանքման համակարգ՝ 24/7 ռեժիմով, երբ փաստերի ստուգողները և պետական մարմինները կհամագործակցեն զանգվածային ապատեղեկատվության դեպքերում:

Կարևոր է համատեղ պետական-մեդիա արշավների միջոցով պարբերաբար ներկայացնել փաստերի ստուգման հարթակները, սովորեցնել քաղաքացիներին օգտվել դրանցից և խրախուսել կասկածելի տեղեկությունների հաղորդումը: Առնվազն ամսական մեկ անգամ հանրային հեռուստատեսությունում պետք է հեռարձակվի **փաստերի ստուգման թեմատիկ հաղորդում** կամ սյուժե

Փաստերի ստուգման հարթակների արդյունավետ գործունեության ապահովումը պահանջում է **կայուն ֆինանսավորման ծրագրի ստեղծում՝** 3-5 տարի երկարաժամկետ աջակցությամբ: Ծրագիրը պետք է ընդգրկի տեխնոլոգիական զարգացում, մասնագիտական վերապատրաստումներ և միջազգային կապերի ամրապնդում: Անհրաժեշտ է աջակցել հարթակների IFCN (International Fact-Checking Network) անդամակցությանը և համագործակցությանը Facebook, Google, TikTok փաստերի ստուգման ծրագրերի հետ՝ ապահովելով Հայաստանի փաստերի ստուգման համակարգի միջազգային ստանդարտներին համապատասխանությունը:

5.2.5 Սփյուռքի հետ համագործակցություն

Հայեցակարգը առանձին ռազմավարական ուղղություն է դարձրել ապատեղեկատվության դեմ պայքարը Հայաստան-Արցախի ժողովուրդ-սփյուռք փոխգործակցության օրակարգում: Գործողություն 2.4.դ-ով նախատեսվել է թեմատիկ քննարկումների և միջոցառումների կազմակերպում, համաշխարհային հայկական գագաթաժողովների և սփյուռքահայ համաժողովների ժամանակ ապատեղեկատվության դեմ պայքարի ներառում որպես օրակարգային խնդիր, ինչպես նաև միջազգային գիտական կենտրոններում հետազոտությունների իրականացմանն աջակցություն:

ԳԾ-ով 2024-2026թթ. ընթացքում նախատեսված էր տարեկան առնվազն 10 հետազոտություն իրականացնել միջազգային համալսարաններում: Սակայն հաշվետվությունը ցույց է տալիս, որ սփյուռքի ուղղությունը գրեթե չի իրականացվել: Չկան համակարգված ծրագրեր սփյուռքահայ

մեդիաների, կազմակերպությունների հետ համագործակցության համար ապատեղեկատվության դեմ պայքարի ոլորտում:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ սփյուռքը կարող է դառնալ կարևոր ռեսուրս ապատեղեկատվության դեմ պայքարում՝ ապահովելով տեղեկատվության տարածում օտարալեզու դաշտերում, հակահարվածային նարատիվների մշակում և տարածաշրջանային մեդիա ներկայությունը: Հայ սփյուռքի ներուժը՝ ներառյալ մեդիա, կրթական և մշակութային կազմակերպությունները, դեռևս չի օգտագործվում համակարգված կերպով:

Սփյուռքի հետ արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է բազմաթիվ ուղղություններով համատեղ գործողություններ՝

Համակարգող մարմինը պետք է ներառի սփյուռքի հետ համագործակցության համակարգումը որպես իր առանցքային գործառույթներից մեկը: ԱԳՆ-ի և Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հետ համատեղ անհրաժեշտ է ստեղծել **Հայաստան-Սփյուռք ապատեղեկատվության դեմ պայքարի համակարգման կենտրոն**: ԱԳՆ-ը կարող է դիտարկել իր կառուցվածքում **Ռազմավարական հաղորդակցության և սփյուռքի համակարգման ստորաբաժանման ստեղծումը**, որը կզբաղվի սփյուռքահայ մեդիաների, կազմակերպությունների և ազդեցիկ անձանց հետ համագործակցությամբ, կապահովի պաշտոնական տեղեկատվության արագ փոխանակում, կհամակարգի համատեղ արշավները և կմշակի սփյուռքի համար հաղորդակցական նյութեր:

Կարևոր է մշակել և իրականացնել **«Սփյուռքահայ փաստերի ստուգողների ցանց»** ծրագիրը, որը կմիավորի սփյուռքի տարբեր երկրներում գործող կամ նոր ստեղծվող փաստերի ստուգման նախաձեռնությունները: Ցանցը կստանա մեթոդաբանական, տեխնոլոգիական և ֆինանսական աջակցություն Հայաստանից և կիրականացնի համատեղ նախագծեր՝ ապահովելով միասնական մեթոդաբանություն և արագ տեղեկատվության փոխանակում:

Անհրաժեշտ է ամրապնդել **համագործակցությունը սփյուռքի խոշոր մեդիաների** (Asbarez, Armenian Weekly և այլք) **հետ**՝ ապահովելով, որ Հայաստանից պաշտոնական տեղեկատվությունը ճշգրիտ և ժամանակին հասնի սփյուռքահայ լսարանին: Պետք է մշակել համագործակցության հուշագրեր, ստեղծել տեղեկատվության փոխանակման արագ ալիքներ և կանոնավոր ապահովել բրիֆինգներ ու մամուլի նյութեր:

Արդյունավետ լուծում է **«Մեդիագրագիտության դեսպաններ»** ծրագրի ստեղծումը, որի շրջանակներում տարեկան 50-100 սփյուռքահայ երիտասարդ կստանա խորացված վերապատրաստում Հայաստանում, իսկ վերադառնալով իրենց երկրներ՝ կդառնա մեդիագրագիտության տարածման դեսպան սփյուռքում: Ծրագիրը կապահովի երկարաժամկետ ազդեցություն և կստեղծի սփյուռքում մեդիագրագիտության առաջատարների ցանց:

Համաշխարհային հայկական գագաթաժողովների և սփյուռքի մեծ միջոցառումների շրջանակներում պարտադիր պետք է ներառել **ապատեղեկատվության և մեդիագրագիտության առանձին նիստեր:** Անհրաժեշտ է հրավիրել միջազգային փորձագետներ, ներկայացնել լավագույն փորձը և քննարկել համատեղ ռազմավարություններ: Բացի այդ, համակարգող մարմինը պետք է կազմակերպի տարեկան **«Սփյուռքահայ ապատեղեկատվության դեմ պայքարի ֆորում»**՝ հավաքելով սփյուռքի տարբեր երկրներից մասնագետներ փորձի փոխանակման և համատեղ ռազմավարությունների մշակման նպատակով:

5.2.6 Միջազգային համագործակցություն

Հայեցակարգը և ԳԾ-ն միջազգային համագործակցությունը չեն դիտարկում որպես առանձին ուղղություն: Միևնույն ժամանակ, հաշվետվության մեջ առկա է որոշակի տեղեկատվություն իրականացված քայլերի վերաբերյալ, որոնք սակայն սահմանափակվում են առանձին դոնորային

ծրագրերով: Ապատեղեկատվության դեմ պայքարի ոլորտում համակարգային, պետական մակարդակի միջազգային համագործակցություն դեռ չի ձևավորվել:

Լիտվան դարձել է տարածաշրջանային առաջատար ապատեղեկատվության դեմ պայքարի ոլորտում՝ սերտ համագործակցելով Եվրոպական միության (ԵՄ), Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) և ԱՄՆ-ի հետ: Լիտվան ակտիվորեն մասնակցում է ԵՄ-ի **East StratCom Task Force** նախաձեռնություններին, որոնք իրականացնում են Ռուսաստանի կողմից տարածվող ապատեղեկատվության մոնիտորինգ և հակազդման վերլուծություն: Ռիգայում (Լատվիա) գործող **ՆԱՏՕ-ի Ռազմավարական հաղորդակցության գերազանցության կենտրոնը** (*NATO StratCom Centre of Excellence*) համագործակցում է նաև լիտվական ռազմավարական հաղորդակցության ստորաբաժանումների հետ՝ հիբրիդային սպառնալիքների վերլուծության և հակազդման մեթոդների մշակման նպատակով: Լիտվան պարբերաբար իրականացնում է փորձի փոխանակում և համատեղ ծրագրեր Էստոնիայի, Լատվիայի, Լեհաստանի և Ուկրաինայի գործընկեր կառույցների հետ:

Այս փորձը ցույց է տալիս, որ ապատեղեկատվության դեմ պայքարի արդյունավետ համակարգը պահանջում է նաև արտաքին գործընկերային դաշտում կայուն և ինստիտուցիոնալ համագործակցություն: Այդ ուղղությամբ նպատակահարմար է, որ Ապատեղեկատվության դեմ պայքարի համակարգող մարմինը դառնա Հայաստանի միջազգային համագործակցության հիմնական համակարգողը՝ ձևավորելով Հայաստանը որպես տարածաշրջանային կենտրոն: Խորհուրդը, համագործակցելով ԱԳՆ-ի հետ, պետք է մշակի **«Արտաքին տեղեկատվական դաշտում Հայաստանի ապատեղեկատվության դեմ պայքարի ռազմավարություն»,** որը կսահմանի պետության դիրքավորումն ու հաղորդակցական մոտեցումները միջազգային մեդիա միջավայրում:

ԱԳՆ-ի կառուցվածքում նպատակահարմար է ստեղծել **ռազմավարական հաղորդակցության և ապատեղեկատվության դեմ պայքարի ստորաբաժանում**, որը կհամակարգի արտաքին տեղեկատվական քաղաքականությունը, կներկայացնի հայկական տեսակետը միջազգային հարթակներում և կհամագործակցի համակարգող խորհրդի ու սփյուռքի հետ կապի ստորաբաժանման հետ: Այս միավորը պետք է նպաստի նաև **Հայաստանի դեսպանատներում թվային դիվանագիտության և ռազմավարական հաղորդակցության մասնագետների ներգրավմանը՝** ապահովելու համար տեղական մեդիայի հետ կապերը, հայկական դիրքորոշումների առաջմղումը և ապատեղեկատվության արագ հերքումը:

Համակարգող մարմինը կարող է դառնալ Կովկասյան ապատեղեկատվության դեմ պայքարի տարածաշրջանային հանգույց՝ կազմակերպելով Երևանում ամենամյա **«Կովկասյան ապատեղեկատվության դեմ պայքարի համաժողով»,** որը կհամախմբի Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի և այլ երկրների փորձագետների՝ փորձի փոխանակման և համատեղ նախաձեռնությունների նպատակով: Երևանը կարող է դիրքավորվել որպես **Արևելյան գործընկերության** երկրների համագործակցության հարթակ այս ոլորտում:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է, որ Հայաստանը դիտորդի կարգավիճակով միանա ԵՄ **Code of Practice on Disinformation** նախաձեռնությանը՝ ուսումնասիրելու և կիրառելու համար ԵՄ լավագույն փորձը: Մարմինը կարող է համակարգել այս գործընթացը՝ միաժամանակ նախաձեռնելով «**Ապատեղեկատվության դեմ պայքարի միջազգային հետազոտությունների ֆոնդ»,** որը տարեկան կֆինանսավորի մի շարք հետազոտություններ Հայաստանի և միջազգային համալսարաններում՝ ուսումնասիրելով ապատեղեկատվության արշավները, համաշխարհային լավագույն փորձը և նոր տեխնոլոգիաների կիրառությունը, ներառյալ արհեստական բանականությունը:

Հայաստանի արտաքին համագործակցության շրջանակում նպատակահարմար է մշակել և իրականացնել **համագործակցության հուշագրեր** Բալթյան երկրների, Ֆինլանդիայի, Շվեդիայի, Չեխիայի, Լեհաստանի, Ուկրաինայի և Վրաստանի հետ՝ հիմք ընդունելով նրանց հիբրիդային

սպառնալիքների դեմ պայքարի փորձը: Կարևոր է կազմակերպել փորձի փոխանակման այցելություններ, համատեղ վերապատրաստումներ և նախագծեր: ՀՀ-ում անհրաժեշտ է ձևավորել **IFCN (International Fact-Checking Network)** ստանդարտներին համապատասխան փաստերի ստուգման լաբորատորիա, որը կհավատարմագրվի և կհամագործակցի միջազգային հարթակների (օրինակ՝ META) հետ՝ ապահովելով հայկական փաստերի ստուգման կառույցների միջազգային ճանաչում և ռեսուրսների ներգրավում:

5.3 Մեդիագրագիտություն և կրթություն

Մեդիագրագիտությունը ապատեղեկատվության դեմ պայքարի հիմնաքարն է: Հայեցակարգի երրորդ ռազմավարական ուղղությունը նպատակ ունի բարձրացնել մեդիաազատությունների վերաբերյալ գիտելիքի և մեդիագրագիտության մակարդակը՝ ձևավորելով ապատեղեկատվության հանդեպ հանրային դիմակայություն: Նախատեսվել է մեդիագրագիտության հայեցակարգի և գործողությունների պլանի մշակում, մեդիագրագիտության ինտեգրում կրթության մեջ, հանրակրթությունից դուրս մնացած խմբերի հետ աշխատանք:

Գործնականում կատարվել են առանձին քայլեր՝ հանրակրթական համակարգում ներդրվել է մեդիագրագիտության չափորոշիչ, մեկնարկել են ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր, իրականացվել են առանձին իրազեկման միջոցառումներ: Այնուամենայնիվ, մեդիագրագիտության զարգացման բաղադրիչը ներկայումս իրականացվում է ոչ ամբողջական: Չի ընդունվել մեդիագրագիտության ազգային հայեցակարգ, սահմանափակ է նախադպրոցական կրթությունում մեդիագրագիտության ներդրումը, հանրակրթական համակարգում չափորոշիչը կիրառվում է մասնակի՝ բավարար ուսումնական նյութերի և վերապատրաստված ուսուցիչների բացակայության պայմաններում, բուհական համակարգում մեդիագրագիտությունը դեռևս չի դարձել համընդհանուր կամընտրական առարկա, սահմանափակ են համայնքային և ոչ ֆորմալ կրթության հարթակները, իսկ երեխաների թվային անվտանգության համակարգը դեռևս ձևավորման փուլում է:

Մեդիագրագիտության համապարփակ համակարգի լիարժեք ձևավորումը պահանջում է վեց ուղղություններով համաժամանակյա առաջընթաց՝ մեդիագրագիտության իրավական հիմքերի ամրապնդում՝ ազգային հայեցակարգի և գործողությունների պլանի ընդունմամբ, նախադպրոցական կրթությունում մեդիագրագիտության համակարգված ներդրում՝ ինտեգրման ուղեցույցների մշակմամբ և մանկավարձների վերապատրաստմամբ, հանրակրթական համակարգում մեդիագրագիտության լիարժեք զարգացում՝ չափորոշչի արդյունավետ իրականացմամբ, որակյալ ուսումնական նյութերի ստեղծմամբ և ուսուցիչների համակարգված վերապատրաստմամբ, բուհական կրթությունում մեդիագրագիտության համընդհանուր ներդրում՝ կամընտրական առարկայի ազգային ծրագրի ընդունմամբ, համայնքային և ոչ ֆորմալ կրթության հնարավորությունների ընդլայնում՝ գրադարաններում մեդիակենտրոնների հիմնմամբ և մեծահասակների համար առցանց հարթակի ստեղծմամբ, ինչպես նաև երեխաների և անչափահասների թվային անվտանգության ապահովում՝ ազգային ռազմավարության մշակմամբ և անվտանգության մեխանիզմների ներդրմամբ:

5.3.1 Մեդիագրագիտության իրավական հիմքերի ամրապնդում

Մեդիագրագիտության համակարգային զարգացման համար անհրաժեշտ է ամուր իրավական հիմք: Հայեցակարգը նախատեսում է մեդիագրագիտության հայեցակարգի և գործողությունների պլանի մշակում և ընդունում՝ ներառական ձևաչափով (գործողություն 3.1.ա): ԳԾ-ով սահմանված

էր 2024թ.-ին ստեղծել մեդիագրագիտության ծրագրերի համակարգման խումբ, իրականացնել կարողությունների ու կարիքների գնահատման ուսումնասիրություններ, քարտեզագրել առկա ռեսուրսները, մշակել մեդիագրագիտության տարածման ծրագիրը, վերանայել և վերջնականացնել գործողությունների պլանը։

Հաշվետվության համաձայն՝ համակարգման խումբը ձևավորվել է, սակայն մեդիագրագիտության հայեցակարգը դեռևս չի ընդունվել։ Բացակայում է միասնական ռազմավարական փաստաթուղթ, որը կսահմանի մեդիագրագիտության զարգացման երկարաժամկետ տեսլականը, նպատակները, մեխանիզմները և պատասխանատվությունները։ Առանց օրենսդրական հստակ կարգավորումների՝ մեդիագրագիտության ներդրումը կրթական համակարգում մնում է հատվածական և կախված առանձին նախաձեռնություններից։

«Մեդիագրագիտության զարգացման ազգային հայեցակարգը 2025–2030թթ.» պետք է մշակվի լրագրողական համայնքի, ՔՀԿ-ների, ուսուցիչների և ծնողների լայն մասնակցությամբ՝ ապահովելու համար գործընթացի ներառականությունն ու կայունությունը։ Հայեցակարգը պետք է սահմանի հստակ տեսլական, չափելի նպատակներ, ֆինանսավորման աղբյուրներ և պատասխանատու մարմիններ։ Դրա հիման վրա անհրաժեշտ է մշակել մանրամասն գործողությունների պլան՝ տարեկան բյուջետավորմամբ, չափելի արդյունքներով և հստակ ժամկետներով։ Պլանը պետք է ընդգրկի հանրակրթության, նախադպրոցական կրթության, բուհական և ոչ ֆորմալ կրթության բոլոր բաղադրիչները։

Կարևոր է օրենսդրորեն ամրագրել կրթական հաստատությունների պարտավորությունները մեդիագրագիտության ոլորտում։ Անհրաժեշտ է մշակել փոփոխություններ **«Կրթության մասին»** և **«Նախադպրոցական կրթության մասին»** օրենքներում՝ **մեդիագրագիտությունը ներառելով որպես պարտադիր բաղադրիչ։** Նույնիսկ կրթական հաստատությունների վարկանիշային գնահատման համակարգում պետք է սահմանել մեդիագրագիտության կարողությունների ձևավորումը որպես առանձին չափանիշ։

Ապատեղեկատվության դեմ պայքարի համակարգող մարմինը պետք է համակարգի մեդիագրագիտության քաղաքականությունը և ապահովի տարբեր մարմինների՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՄՆ), Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի (ԿԶՆԱԿ), Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) և ՀՌՀ գործողությունների փոխհամաձայնեցումը։ Մարմնի կազմում նպատակահարմար է ստեղծել **Մեդիագրագիտության մշտական ստորաբաժանում**, որը կզբաղվի մոնիտորինգի, գնահատման և քաղաքականության ձևավորման հարցերով։

Անհրաժեշտ է մշակել **մեդիագրագիտության ազգային ստանդարտներ**՝ սահմանելով տարիքային խմբերի համար համապատասխան կարողություններ, գիտելիքներ և հմտություններ։ Ստանդարտները պետք է համապատասխանեն միջազգային լավագույն փորձին և ներառեն քննադատական մտածողություն, փաստերի ստուգում, թվային անվտանգություն, մեդիա ստեղծագործություն և քաղաքացիական մասնակցություն։

5.3.2 Նախադպրոցական կրթությունում մեդիագրագիտության ներդրում

Մեդիագրագիտության հիմքերը պետք է դրվեն վաղ տարիքից։ Հայեցակարգը նախատեսում է նախադպրոցական կրթությունում մեդիագրագիտության ինտեգրման ուղեցույցների մշակում, նախադպրոցական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՆՈՒՀ) և դպրոցների տեխնիկական ապահովում անհրաժեշտ սարքավորումներով, ինչպես նաև անվտանգ համացանցի և կիբերանվտանգության ուղեցույցների մշակում (գործողություն 3.2.ա), և ՆՈՒՀ մանկավարժների կարողությունների զարգացում (գործողություն 3.2.բ)։

ԳԾ-ով սահմանված էր 2025 թվականին մշակել մեդիագրագիտության ինտեգրման ուղեցույցներ 4–6 տարեկանների համար և սկսել դրանց փորձնական կիրառումը, իրականացնել մանկավարժների վերապատրաստումներ, իսկ 2026 թվականին ընդլայնել ինտեգրումը 2–4 տարեկանների խմբի համար՝ շարունակելով վերապատրաստումները: Հաշվետվության համաձայն՝ մի շարք ՔՀԿ-ներ մշակել են նախնական ուղեցույցներ, սակայն դրանց պաշտոնական ընդունումը և համակարգային ներդրումը դեռ չի իրականացվել: Մանկավարժների վերապատրաստումները մնում են մասնակի և կախված դոնորային նախաձեռնություններից:

ԿԶՆԱԿ-ը պետք է անհապաղ ավարտի և պաշտոնապես ընդունի **«Նախադպրոցական կրթությունում մեդիագրագիտության ինտեգրման ուղեցույցը»**՝ նախատեսված 2–6 տարեկանների համար: Ուղեցույցը պետք է հիմնված լինի նոր նախադպրոցական կրթության չափորոշչի մեդիա և թվային կարողունակության բաղադրիչի վրա՝ ներառելով մեթոդաբանություն, խաղային և ստեղծագործական գործունեության օրինակներ:

ԿԶՆԱԿ-ը և ԿՏԱԿ-ը պետք է համատեղ մշակեն **մանկավարժների 24-ժամյա պարտադիր վերապատրաստման մոդուլ մեդիագրագիտության թեմայով**, որը կդառնա պարտադիր բոլոր գործող և նոր մանկավարժների համար: Վերապատրաստումները պետք է համադրեն տեսական, գործնական և փորձի փոխանակման բաղադրիչներ:

ՆՈՒՀ-երը պետք է համալրվեն մեդիա և թվային գրագիտության զարգացման համար անհրաժեշտ սարքավորումներով՝ պլանշետներով, ինտերակտիվ վահանակներով, լուսանկարչական ապարատներով, միկրոֆոններով և կրթական ռեսուրսներով: Անհրաժեշտ է ապահովել անվտանգ և որակյալ ինտերնետային կապ, ներդնել կիբերանվտանգության ստանդարտներ: ԲՏԱՆ-ը ԿԶՆԱԿ-ի հետ համատեղ պետք է մշակի **ՆՈՒՀ-երի կիբերանվտանգության ուղեցույց**, որը կներառի բովանդակության ֆիլտրավորում, անվտանգ որոնման համակարգեր, ծնողական վերահսկողություն և արտակարգ իրավիճակների արձագանքման ալգորիթմներ:

Բացի այդ, անհրաժեշտ է մշակել **առցանց էթիկայի վարքականոն ՆՈՒՀ-երի աշխատակիցների համար**, մանկավարժների ներգրավմամբ և մասնակցային մոտեցմամբ: Վարքականոնն անհրաժեշտ է, որպեսզի սահմանվեն սոցիալական մեդիայում վարքագծի սկզբունքները, երեխաների լուսանկարների և տեսանյութերի հրապարակման կանոնները, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության պահանջները:

5.3.3 Հանրակրթական համակարգում մեդիագրագիտության զարգացում

Հանրակրթական համակարգը մեդիագրագիտության տարածման հիմնական հարթակն է: Ինչպես նշվել է նախորդ բաժնում, մեդիագրագիտության ներդրումը կրթական համակարգում պետք է իրականացվի միասնական իրավական և ինստիտուցիոնալ հիմքերի վրա: Հայեցակարգը նախատեսում է մեդիագրագիտության ինտեգրում հանրակրթության մեջ՝ համաձայն նոր չափորոշչի, դպրոցների տեխնիկական ապահովում և ուսուցիչների կարողությունների զարգացում (գործողություններ 3.2.ա և 3.2.բ):

2021 թ. հաստատված հանրակրթության պետական չափորոշիչը ներառում է թվային և մեդիա կարողունակությունը որպես ութ հիմնական կարողունակություններից մեկը: Գործողությունների ծրագրով նախատեսվել էր 2024–2025 թթ. ընթացքում գնահատել մեդիագրագիտության բաղադրիչը չափորոշչի փորձարկման շրջանակում, մշակել ուսումնական նյութեր հասարակագիտության, հայոց լեզվի և գրականության առարկաների համար, իսկ 2026 թ.՝ ընդլայնել դրանք ևս երկու առարկայով:

Հաշվետվության համաձայն՝ չափորոշիչը փորձարկվում է Տավուշի մարզում, սակայն մեդիագրագիտության բաղադրիչի համակարգված գնահատում չի իրականացվել: Ուսումնական նյութերի մշակումն ուշանում է, իսկ ուսուցիչների վերապատրաստումները մնում են անբավարար, ինչի հետևանքով մեդիագրագիտության կարողունակությունների զարգացումը դպրոցներում իրականացվում է մասնակի:

ԿԳՄՄՆ-ը պետք է ապահովի չափորոշչի փորձարկման փուլում **մեդիագրագիտության բաղադրիչի համապարփակ գնահատում՝** ուսումնասիրելով ինտեգրման ընթացքը, արդյունքները և առկա խոչընդոտները: Գնահատման արդյունքներով անհրաժեշտ է կատարել ճշգրտումներ չափորոշչում և մեթոդաբանությունում՝ ապահովելով ծրագրի աստիճանական ընդլայնումը ամբողջ երկրում:

Անհրաժեշտ է արագացնել **ուսումնական նյութերի և մեթոդական ուղեցույցների մշակումը հասարակագիտության, հայոց լեզվի և գրականության առարկաների** համար՝ ներառելով դասերի սցենարներ, գործնական վարժություններ և գնահատման գործիքներ, ինչպես նաև մեկնարկել թվային գրագիտության բաղադրիչի ուսումնական նյութերի մշակում:

Ուսուցիչների վերապատրաստումների համակարգումը պետք է դառնա առաջնահերթություն: ԿՏԱԿ-ը ԿԳՄՄՆ-ի և ՔՀԿ-ների հետ համատեղ պետք է իրականացնի համապարփակ վերապատրաստման ծրագիր՝ ըստ առարկաների՝ համադրելով տեսություն, գործնական հմտություններ և փորձի փոխանակում: Առաջարկվում է ստեղծել **«Մենթոր դպրոցների» ցանց**, որոնց միջոցով կկազմակերպվեն փորձի փոխանակում, բաց դասեր և մեդիագրագիտության զարգացման սեմինարներ:

Դպրոցները պետք է համալրվեն մեդիա կրթության համար անհրաժեշտ սարքավորումներով և ռեսուրսներով, ինչպես նաև ստեղծեն **մեդիա լաբորատորիաներ** կամ փոքր ստուդիաներ՝ սովորողների ստեղծագործական հմտությունները զարգացնելու նպատակով: ԲՏԱՆ-ը ԿԳՄՄՆ-ի հետ համատեղ պետք է մշակի **դպրոցների կիբերանվտանգության ստանդարտ՝** ներառելով բովանդակության ֆիլտրավորում, անվտանգ որոնում, կիբերհարձակումներից պաշտպանություն և սովորողների անձնական տվյալների պաշտպանություն:

Բացի այդ, անհրաժեշտ է մշակել **առցանց տիրույթում էթիկայի վարքականոն ուսուցիչների համար** ՝ ուսուցչական համայնքի ակտիվ մասնակցությամբ: Վարքականոնը պետք է սահմանի սոցիալական մեդիայում վարքագծի կանոնները, սովորողների հետ առցանց հաղորդակցության էթիկան և մասնագիտական հեղինակության պահպանման սկզբունքները:

5.3.4 Բուհական կրթությունում մեդիագրագիտության ներդրում

Բարձրագույն կրթությունը հանդիսանում է մեդիագրագիտության զարգացման առանցքային օղակ՝ ապահովելով մասնագիտական պատրաստվածություն և հետազոտական ներուժ: Հայեցակարգը նախատեսում է մեդիագրագիտությունը դարձնել կամընտրական առարկա բոլոր ֆակուլտետների ուսանողների համար, խրախուսել հետազոտական աշխատանքները (գործողություն 3.2.դ), իրականացնել դասախոսների վերապատրաստումներ և մշակել բուհերի աշխատակիցների համար առցանց էթիկայի վարքականոն (գործողություն 3.2.ե):

ԳԾ-ով նախատեսվել էր 2025թ. ընթացքում մեդիագրագիտության առարկան ներդնել առնվազն հինգ պետական բուհում, ապահովել գիտական և հետազոտական աշխատանքների խթանում, մշակել դասախոսների վերապատրաստման ծրագրեր, իսկ 2026 թ.՝ ընդլայնել առարկայի ներդրումը բոլոր պետական բուհերում և առաջարկել այն մասնավոր բուհերին: Հաշվետվության համաձայն՝ մի շարք բուհերում առկա են մեդիագրագիտության առանձին դասընթացներ, սակայն համակարգային մոտեցում, միասնական ծրագիր և որակավորված դասախոսների պատրաստվածություն դեռևս բացակայում են:

Մանկավարժական բուհերում մեդիագրագիտության բաղադրիչը պետք է ամբողջությամբ համապատասխանեցվի հանրակրթության նոր չափորոշչի պահանջներին՝ ապահովելով, որ ապագա ուսուցիչները ստանան համապարփակ մեդիա և տեղեկատվական գրագիտության կրթություն: ԿԳՄՄՆ-ը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի միջոցով պետք է մշակի **«Մեդիա և տեղեկատվական գրագիտություն» դասընթացի** միասնական ազգային ծրագիր, որը կներառի տեսական և գործնական բաղադրիչներ, ավարտական աշխատանքներ և արդյունավետության գնահատման մեխանիզմներ: Դասընթացի ներդրումը պետք է մեկնարկի առնվազն հինգ պետական բուհերում՝ հատկապես մանկավարժական ուղղությամբ, այնուհետև աստիճանաբար ընդլայնվի բոլոր պետական բուհերում և առաջարկվի մասնավոր հաստատություններին՝ որպես պարտադիր կամընտրական դասընթաց:

Անհրաժեշտ է պատրաստել որակյալ դասախոսներ՝ մեդիագրագիտության դասընթացների իրականացման համար: ԿԳՄՄՆ-ը ժուռնալիստիկայի ֆակուլտետների հետ համագործակցությամբ պետք է իրականացնի **դասախոսների վերապատրաստման հատուկ ծրագիր,** որը կներառի մեդիագրագիտության տեսություն, դասավանդման մեթոդներ և գործնական վարժություններ:

Կարևոր է խրախուսել **մեդիագրագիտության, ապատեղեկատվության և թվային անվտանգության թեմաներով գիտական հետազոտությունները**: Կոմիտեն պետք է ստեղծի հատուկ **դրամաշնորհային ծրագիր**՝ բակալավրական, մագիստրոսական և դոկտորական մակարդակների համար՝ տարեկան առնվազն տաս հետազոտություն ֆինանսավորելու նպատակով: Նախապատվությունը պետք է տրվի միջբուհական և միջազգային համատեղ ուսումնասիրություններին:

Բուհերում նպատակահարմար է ստեղծել **մեդիա կենտրոններ կամ լաբորատորիաներ**, որտեղ ուսանողները կկարողանան ստեղծել մեդիա արտադրանք, իրականացնել հետազոտություններ և կազմակերպել հանրային միջոցառումներ: Այս կենտրոնները կարող են ծառայել նաև համայնքի համար՝ մեդիագրագիտության վերապատրաստումների, սեմինարների և հանրային քննարկումների կազմակերպման միջոցով:

Անհրաժեշտ է մշակել **բուհերի անձնակազմի համար առցանց տիրույթում էթիկայի վարքականոն**, դասախոսների և ուսանողների մասնակցությամբ: Վարքականոնը պետք է սահմանի սոցիալական մեդիայում վարքագծի սկզբունքները, ուսանողների հետ առցանց հաղորդակցության էթիկան, անձնական տվյալների պաշտպանության պահանջները և կոնֆլիկտային իրավիճակների կառավարման մեխանիզմները:

5.3.5 Համայնքային և ոչ ֆորմալ կրթության հնարավորությունների ստեղծում

Գործողությունների ծրագրի 3.2.գ և 3.3.բ կետերը նախատեսում են համայնքային մեդիագրագիտության զարգացում՝ ներառյալ գրադարաններում մեդիակենտրոնների հիմնումը, համայնքային կազմակերպությունների հետ համագործակցությունը, ծնողների հետ աշխատանքը և սփյուռքահայերի ծրագրերում մեդիագրագիտության ինտեգրումը:

Գրադարանները Հայաստանում դեռևս չեն օգտագործվում իրենց ամբողջ ներուժով որպես մեդիագրագիտության տարածման հարթակներ: Թեև որոշ գրադարաններ կազմակերպում են միջոցառումներ, բացակայում է համակարգված մոտեցումը և անհրաժեշտ ռեսուրսները: Գրադարանավարների մեծ մասը չունի մեդիագրագիտության ոլորտում պատրաստվածություն և հմտություններ դասընթացներ կազմակերպելու համար: Դպրոցական գրադարանները հաճախ բավարար ֆինանսավորում չեն ստանում նոր գրքերի, թվային ռեսուրսների և տեխնիկական սարքավորումների համար: Հանրային գրադարանների շենքերն ու ենթակառուցվածքները շատ դեպքերում հնացած են և չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին:

Համայնքային կազմակերպությունները, մշակույթի և երիտասարդական կենտրոնները, թանգարանները սահմանափակ են ներգրավված մեդիագրագիտության տարածման աշխատանքում: Դրանց աշխատակիցները հիմնականում չունեն անհրաժեշտ պատրաստվածություն, իսկ հաստատություններն ու կազմակերպություններն ինքները՝ ռեսուրսներ այս ուղղությամբ ծրագրեր իրականացնելու համար:

Ֆորմալ կրթությունից դուրս մնացած խմբերը՝ մեծահասակներ, տարեցներ, անգործուններ, ավագ տարիքի անձինք, ովքեր ավարտել են կրթությունը, գրեթե զրկված են մեդիագրագիտության կրթությունից: Մինչդեռ հենց այս խմբերն են հաճախ ավելի խոցելի ապատեղեկատվության նկատմամբ, քանի որ չունեն համապատասխան հմտություններ և գործիքներ տեղեկատվությունը գնահատելու համար:

Ծնողների հետ աշխատանքը մեդիագրագիտության ուղղությամբ իրականացվում է հատվածական և ոչ համակարգված: Մինչդեռ ծնողները կարևոր դեր ունեն երեխաների մեդիա սպառման ձևավորման և թվային անվտանգության ապահովման գործում: Բացակայում են հասանելի ռեսուրսներ և կրթական ծրագրեր, որոնք կօգնեին ծնողներին ուղղորդել իրենց զավակներին թվային աշխարհում:

Լիտվայի փորձը ցույց է տալիս համայնքային մեդիագրագիտության արդյունավետությունը: Այնտեղ գործում են բազմաթիվ համայնքային կենտրոններ, որոնք առաջարկում են անվճար դասընթացներ տարբեր տարիքային և սոցիալական խմբերի համար: Առանձնահատուկ ծրագրեր կան տարեցների, կանանց, փախստականների և այլ խոցելի խմբերի համար:

Անհրաժեշտ է մշակել և ընդունել **գրադարաններում մեդիակենտրոնների ստեղծման ազգային ծրագիրը:** Ծրագիրը պետք է սահմանի մեդիակենտրոնների նպատակները, գործառույթները, տեխնիկական պահանջները, անձնակազմի պատրաստվածության ստանդարտները և ֆինանսավորման աղբյուրները: Կարող է որոշ մարզերում մեկնարկել պիլոտի կարգով: Գրադարանները պետք է վերազինվեն անհրաժեշտ սարքավորումներով՝ համակարգիչներ, պրոյեկտորներ, տեսախցիկներ, միկրոֆոններ, ինտերնետ կապ: Պետք է ստեղծվի նաև **թվային գրադարան՝ մեդիագրագիտության ռեսուրսներով:** Տվյալ մարզի գրադարանավարները պետք է անցնեն համապարփակ վերապատրաստում (40 ժամ), որը կներառի մեդիագրագիտության հիմունքները, դասընթացների կազմակերպման մեթոդները, տեխնիկական սարքավորումների օգտագործումը և համայնքային աշխատանքի հմտությունները: Վերապատրաստումից հետո գրադարանավարները կսկսեն իրականացնել կանոնավոր դասընթացներ և միջոցառումներ՝ թիրախավորելով սովորողներին, ծնողներին, մեծահասակներին և տարեցներին: Փորձարկման տևողությունը կարող է լինել 6-8 ամիս, որից հետո պետք է իրականացվի մանրամասն գնահատում՝ ուսումնասիրելով մասնակիցների կարծիքները, ծրագրի արդյունավետությունը, բացահայտված խնդիրները և լավագույն փորձը: Գնահատման արդյունքների հիման վրա պետք է կատարվեն անհրաժեշտ ճշգրտումներ ծրագրում և վերապատրաստումների բովանդակությունում: Այնուհետև, պետք է սկսվի ծրագրի աստիճանական տարածումը այլ մարզերում: Միաժամանակ պետք է շարունակվի արդեն գործող մեդիակենտրոնների աջակցությունը և նոր բովանդակության մշակումը: Կարևոր է ստեղծել **գրադարանների միջև ցանցային համագործակցություն**: Մեդիակենտրոններ ունեցող գրադարանները պետք է պարբերաբար հանդիպեն, փոխանակեն փորձ, կիսեն մշակած նյութերը և միասին լուծեն առաջացած խնդիրները: Կարելի է ստեղծել նաև առցանց հարթակ, որտեղ գրադարանավարները կկարողանան մուտք գործել ռեսուրսների բազա, տեղադրել իրենց մշակած նյութերը և խորհրդակցել գործընկերների հետ:

Անհրաժեշտ է իրականացնել **համայնքներում մեդիագրագիտության կարիքների քարտեզագրում:** Այս ուսումնասիրությունը պետք է բացահայտի, թե որ խմբերն են ամենաշատ կարիք ունենում մեդիագրագիտության կրթության, ինչ թեմաներ են նրանց համար առավել կարևոր, ինչ ձևաչափերն են նախընտրելի և ինչ համայնքային կառույցներ կարող են ներգրավվել այս աշխատանքում: Պետք է մշակվեն **համայնքային մեդիագրագիտության մոդուլային դասընթացներ**

տարբեր թիրախային խմբերի համար։ Տարեցների համար՝ հիմնական թվային հմտություններ, սոցիալական մեդիա, կեղծ տեղեկությունների ճանաչում։ Ծնողների համար՝ երեխաների թվային անվտանգություն, ընտանեկան մեդիա օգտագործման կանոններ, վնասակար բովանդակությունից պաշտպանություն։ Երիտասարդների համար՝ բովանդակության ստեղծում, փաստերի ստուգում, կիբերանվտանգություն, առցանց հեղինակություն։ Մեծահասակների համար՝ աշխատանքային կապված մեդիա հմտություններ, մասնագիտական տեղեկատվության գնահատում, սոցիալական մեդիա մասնագիտական նպատակներով։ Համայնքային կազմակերպությունների, մշակույթի և երիտասարդական կենտրոնների մասնագետների համար պետք է կազմակերպվեն **վերապատրաստումներ**։ Վերապատրաստված մասնագետները կսկսեն իրականացնել կանոնավոր դասընթացներ իրենց համայնքներում։

Պետք է ստեղծվի **մեդիագրագիտության առցանց հարթակ մեծահասակների համար**։ Հարթակը պետք է ներառի վիդեոդասեր, ինտերակտիվ վարժություններ, թեստեր, օգտակար հղումներ և ռեսուրսներ։ Բովանդակությունը պետք է կազմակերպված լինի մոդուլային սկզբունքով, որպեսզի օգտատերերը կարողանան ընտրել իրենց հետաքրքրող թեմաները։ Հարթակը պետք է հասանելի լինի մոբայլ սարքավորումներից և ունենա պարզ, հարմար ինտերֆեյս։

Ծնողների համար պետք է մշակվեն տարբեր ֆորմատների կրթական նյութեր՝ տպագիր բրոշյուրներ, վիդեոներ, պոդքասթեր, վեբինարներ։ Այս նյութերը պետք է տարածվեն պոլիկլինիկաներում, ՆՈՒՀ-երում, դպրոցներում, սոցիալական ծառայություններում։ Կարևոր է նաև կազմակերպել ծնողական հանդիպումներ դպրոցներում և ՆՈՒՀ-երում՝ մեդիագրագիտության թեմաներով։ Անհրաժեշտ է ապահովել, որ երեխաների թվային անվտանգությունը և մեդիա սպառումը դառնան ծնողավարության, մայրության և խնամակալության ծրագրերի անբաժան մասը։

5.3.6 Երեխաների և անչափահասների պաշտպանություն թվային միջավայրում

Թեև Հայեցակարգը և ԳԾ-ն չեն նախատեսում առանձին բաժին երեխաների թվային պաշտպանության վերաբերյալ, սա կարևոր ուղղություն է, որը պետք է ընդգրկվի մեդիագրագիտության ընդհանուր համատեքստում։

Հայաստանում երեխաների թվային միջավայրում պաշտպանությունը դեռևս բավարար կարգավորված չէ։ Չկան հստակ օրենսդրական նորմեր սոցիալական մեդիայի օգտագործման նվազագույն տարիքի, ծնողական վերահսկողության մեխանիզմների, երեխաների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ։ Շատ երեխաներ մուտք ունեն սոցիալական մեդիա, առցանց խաղերի և այլ հարթակների, որոնք նախատեսված չեն իրենց տարիքի համար։

Ծնողներն ու մանկավարժները հաճախ չգիտեն, թե ինչպես պաշտպանել երեխաներին թվային սպառնալիքներից՝ կիբերբուլինգ, անպատշաճ բովանդակություն, առցանց շահագործում, անձնական տվյալների արտահոսք։ Բացակայում են նաև տարիքին համապատասխան գործիքներ և ռեսուրսներ, որոնք կօգնեին երեխաներին ինքնուրույն զարգացնել անվտանգ վարքագիծ թվային միջավայրում։

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ երեխաների թվային պաշտպանությունը պահանջում է համապարփակ մոտեցում՝ օրենսդրություն, տեխնոլոգիական լուծումներ, ծնողական ներգրավվածություն և կրթություն։ Ավստրալիայում, օրինակ, 2024 թվականին ընդունվել է օրենք, որը սահմանափակում է սոցիալական մեդիայի օգտագործումը 16 տարեկանից ցածր երեխաների համար՝ պահանջելով հարթակներից ստուգել օգտատերերի տարիքը։

Անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը երեխաների թվային պաշտպանության ոլորտում։ Հատկապես կարևոր է դիտարկել Ավստրալիայի, ԵՄ երկրների, Մեծ Բրիտանիայի փորձը՝ տարիքային սահմանափակումների, ծնողական համաձայնության,

հարթակների պատասխանատվության և տեխնոլոգիական պաշտպանության մեխանիզմների առումով։

Պետք է մշակվի երեխաների թվային պաշտպանության ազգային ռազմավարություն, որը կլինի մեդիագրագիտության ծրագրի անբաժան մասը։ Ռազմավարությունը պետք է ներառի իրավական, տեխնոլոգիական, կրթական և սոցիալական բաղադրիչներ։

Իրավական բաղադրիչը պետք է ներառի օրենսդրական փոփոխություններ՝ սահմանելու սոցիալական մեդիայի օգտագործման նվազագույն տարիքը (օրինակ՝ 13 կամ 14 տարեկան), ծնողական համաձայնության ընթացակարգերը, հարթակների պարտականությունները երեխաների անվտանգությունն ապահովելու հարցում, անձնական տվյալների պաշտպանության հատուկ պահանջները երեխաների համար։

Տեխնոլոգիական բաղադրիչը պետք է ներառի տարիքի ստուգման մեխանիզմների մշակում և ներդրում, ծնողական վերահսկողության գործիքների հասանելիություն, ինտերնետի անվտանգ կարգավորումների տարածում դպրոցներում և ՆՈՒՀ-երում։

Կրթական բաղադրիչը պետք է ներառի երեխաների համար տարիքին համապատասխան դասընթացներ թվային անվտանգության մասին, ծնողների համար կրթական ծրագրեր և ռեսուրսներ, մանկավարձների վերապատրաստումներ երեխաների թվային պաշտպանության թեմայով։

Սոցիալական բաղադրիչը պետք է ներառի հանրային իրազեկման արշավներ, խոցելի խմբերի (ցածր եկամուտ ունեցող ընտանիքներ, գյուղական համայնքներ) աջակցության ծրագրեր, թվային անվտանգության թեժ գծի գործարկում երեխաների և ծնողների համար։

Կարևոր է նաև ստեղծել բազմակողմ համագործակցություն պետական մարմինների (ԿԳՄՄՆ, Արդարադատության նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն), տեխնոլոգիական ընկերությունների, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների միջև։

6. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Ապատեղեկատվության դեմ արդյունավետ պայքարը պահանջում է համակարգված և երկարաժամկետ մոտեցում, որը միավորում է պետական կառույցների, քաղաքացիական հասարակության, մեդիայի, մասնավոր հատվածի և միջազգային գործընկերների ջանքերը: «Ամբողջ հասարակության» (Whole-of-Society) մոտեցումը, որը ներկայացված է սույն փաստաթղթում, ապահովում է ինչպես արագ արձագանքման մեխանիզմների կատարելագործումը, այնպես էլ կանխարգելիչ համակարգի զարգացումը՝ ստեղծելով կայուն տեղեկատվական միջավայր:

Սույն ճանապարհային քարտեզը սահմանում է երեք փոխկապակցված առաջնահերթ ուղղություններ՝ ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորում, համագործակցության ամրապնդում և մեդիագրագիտության զարգացում: Այս ուղղությունները փոխլրացնում են միմյանց և միասին ապահովում են ապատեղեկատվության դեմ պայքարի համապարփակ համակարգի ստեղծումը: Ինստիտուցիոնալ հիմքերը ապահովում են համակարգման և արագ արձագանքման մեխանիզմները, համագործակցությունը միավորում է բոլոր շահագրգիռ կողմերի ջանքերն ու ռեսուրսները, իսկ մեդիագրագիտությունը ձևավորում է հասարակության երկարաժամկետ դիմադրողականությունը:

Փաստաթղթի իրականացման հաջողությունը կախված է մի քանի կարևոր նախապայմաններից: Առաջինը՝ քաղաքական կամքի և ռեսուրսների ապահովումն է՝ ինստիտուցիոնալ համակարգի ստեղծման, կայուն ֆինանսավորման մեխանիզմների հաստատման և մարդկային կարողությունների զարգացման համար: Երկրորդը՝ բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավվածությունն ու փոխադարձ վստահությունն է՝ հիմնված թափանցիկության, ներառականության և հաշվետվողականության սկզբունքների վրա: Երրորդը՝ միջազգային փորձի ուսումնասիրումն ու տեղայնացումն է՝ հարմարեցված Հայաստանի առանձնահատկություններին և մարտահրավերներին:

Ճանապարհային քարտեզի իրականացումը պահանջում է փուլային մոտեցում: Առաջին փուլում անհրաժեշտ է ձևավորել ինստիտուցիոնալ շրջանակը՝ ստեղծելով համակարգող մարմին, ընդունելով միջգերատեսչական հաղորդակցական ռազմավարություն և հաղորդակարգեր, հաստատելով համագործակցության մեխանիզմներ: Երկրորդ փուլում կարևոր է զարգացնել կարողությունները՝ իրականացնելով անձնակազմի վերապատրաստում, ներդնելով թվային գործիքակազմ, աջակցելով ՔՀԿ-ներին և փաստերի ստուգման հարթակներին, ինտեգրելով մեդիագրագիտությունը կրթական համակարգի բոլոր մակարդակներում: Երրորդ փուլում անհրաժեշտ է ապահովել համակարգի կայունությունը՝ մշտադիտարկելով արդյունքները, գնահատելով ազդեցությունը և կատարելագործելով մեխանիզմները:

Սույն փաստաթղթի իրականացումը նպաստելու է Հայաստանի տեղեկատվական անվտանգության ամրապնդմանը, հանրային վստահության բարձրացմանը և փաստահեն հանրային դիսկուրսի զարգացմանը: Այն կապահովի ապատեղեկատվության դեմ պայքարի համակարգի անցումը արձագանքող մոտեցումից դեպի կանխարգելիչ և համակարգված քաղաքականություն՝ ստեղծելով դիմադրողական և տեղեկատվական առումով անվտանգ հասարակություն:

Ապատեղեկատվության դեմ պայքարը շարունակական գործընթաց է, որը պահանջում է մշտական ուշադրություն, հարմարվողականություն և բոլոր շահագրգիռ կողմերի համատեղ ջանքեր: Միայն «Ամբողջ հասարակության» մոտեցման հետևողական իրականացմամբ է հնարավոր ապահովել տեղեկատվական անվտանգությունը, պաշտպանել ժողովրդավարական արժեքները և ամրապնդել հանրային վստահությունը՝ ստեղծելով ապագա սերունդների համար կայուն և անվտանգ տեղեկատվական միջավայր: